Azg
Ազգ
7 ՅՈՒՆԻՍ 2008 ՇԱԲԱԹ 108 (4002)

«Հրանից հետո հերթը Բասքն Օրանինն է»

Սպառնում է «Թուրք վրիժառուների բրիգադը»

Այս մասին երեկ տեղեկացրել են թուրքական կենտրոնական թերթերը, մասնավորապես «Բիրգյունը»: Տեղեկության համաձայն, «Թուրք վրիժառուների բրիգադը» (Turk Intikam Tugayi), որը երկրի օրակարգում է հայտնվել առեղծվածային բազում սպանությունների կատարմամբ, սպառնացել է Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի դոցենտ, Հրանտ Դինքի զինակից եւ «Ակօս» շաբաթաթերթում սյունաշարի հեղինակ Բասքն Օրանին:

«Բիրգյունը» գրում է, որ Հրանտ Դինքի սպանությունից հետո սպառնալիքների թիրախ դարձած «Ակօսի» խմբագրությունը մայիսի 30-ին ինտերնետային նամակ է ստացել «Թուրք վրիժառուների բրիգադից», որտեղ ասված է. «Հրանից հետո հերթական թիրախը Բասքն Օրանն է: Վերացնելու ենք նաեւ այս կեղտին: Հայի վաստակները հանգիստ չեն թողնելու, քանի դեռ մենք կանք»:

Պարզ. Օրանը փաստաբանի միջոցով դիմել է դատախազություն, դիմումում նշելով, «Սպառնալիքը չափազանց լուրջ է, որովհետեւ հայտնի են որոնք ահաբեկչական կազմակերպություն «Թուրք վրիժառուների բրիգադի» մարդասպան գործունեությունն ու ահաբեկչությունները երկրում»:

Հ. Ղ.

Բանակցությունները կշարունակվեն

Մադրիդյան առաջարկները պետք է բարելավվեն

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Սանկտ Պետերբուրգ

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երեկ Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած հանդիպումից հետո նման համոզմունք հայտնեցին ինչպես երկու երկրների արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Էլմար Մամեդյարովը, այնպես էլ Մինսկի խմբի համանախագահները:

Հիշեցնենք, որ հունիսի 5-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած ոլորտիրակությունը ժամանել էր Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք՝ մասնակցելու համար այստեղ հունիսի 6-ին եւ 7-ին նախատեսված ԱՊՀ անդամ երկրների նախագահների ոչ պաշտոնական (առանց փողկալների) գագաթաժողովին եւ սանկտպետերբուրգյան 12-րդ միջազգային տնտեսական համաժողովին: Սովորաբար նման միջոցառումները երկրների ղեկավարներն օգտագործում են իրենց գործընկերների հետ երկկողմ հանդիպումների համար: Սանկտպետերբուրգյան գագաթաժողովից եւ տնտեսական համաժողովից առաջ հայտնի էր, որ միմյանց հետ պետք է հանդիպում ունենան Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները: Նման հանդիպման ակնկալիք կար դեռ առաջին տեղի ունեցած ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ժամանակ, ինչը, սակայն, տեղի չունեցավ ադրբեջանական կողմի պատճառով: Սանկտ Պետերբուրգում երեկ տեղի ունեցած հանդիպումը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի համար առաջինն էր իր ադրբեջանցի գործընկերոջ հետ:

Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպումը տեղի ունեցավ Սանկտ Պետերբուրգի «Բալշիյսկայա զվեզդա» հյուրանոցում եւ տեւեց շուրջ 1 ժամ 30 րոպե: Որոշ հատվածներում հանդիպմանը միանում էին Մինսկի խմբի համանախագահներ Մթյու Բրայզան, Բեռնար Ֆասիեն եւ Յուրի Մեզյյակովը, իսկ հիմնական բանակցությունները նախագահները վարում էին դեմ առ դեմ՝ առանց միջնորդների:

Ինչպիսին էին հանդիպման արդյունքները: Այս հարցն ուղղեցին հայ լրագրողներն արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանին**: Իրենց ոլորտախոսություններում արտգործնախարարները համակարծիք էին: Էդվարդ Նալբանդյանը երկու երկրների նախագահների հանդիպումը բնութագրեց որպես ճանաչողական եւ կառուցողական: Ըստ նրա, նախագահները ծանոթացան կողմերի տեսակետներին եւ հանձնարարական տվեցին արտգործնախարարներին շարունակելու բանակցությունները:

Տես էջ 3

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՆ

Հունիսի 5-ի դրությամբ 40 մարդ կալանավորված է

Նախագահական ընտրություններին հաջորդած դեպքերի գործով հունիսի 5-ի դրությամբ 35 մեղադրյալի նկատմամբ ընտրվել է կալանքի հետ կապ չունեցող այլ խափանման միջոց, կալանքի տակ է գտնվում 40 անձ: Այս մասին ԱԺ-ում կայացած լսումների ժամանակ հայտնել է գլխավոր դատախազ **Աղվան Հովսեփյանը**: Դատարան է ուղարկված 65 քրեական գործ՝ 71 անձի նկատմամբ, նրանցից 28-ի նկատմամբ արդեն իսկ կան դատավճիռներ, այդ թվում՝ 10 դատապարտվել են ազատազրկման, 18-ը՝ դատապարտվել են պայմանականորեն, ազատազրկման հետ չկապված պատիժների:

Դատապարտված 28-ից 17-ը լիովին ընդունել են իրենց առաջադրված մեղադրանքը, նրանց նկատմամբ կիրառվել է արագացված դատաքննության կարգ: Ըստ գլխավոր դատախազի, մարտի 1-ին Ազատության հրապարակում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժողներ են դարձել 16 քաղաքացիական անձ եւ ոստիկանության 32 աշխատակից: Նույն օրը դրան հաջորդած զանգվածային անկարգությունների ժամանակ մարմնական վնասվածքներ են ստացել 32 քաղաքացիական անձ, 182 ոստիկաններ եւ զինծառայողներ, այդ թվում՝ 42-ը տարբեր սարքերի պայթյունի հետեւանքով առաջացած տարբեր աստիճանի կոտորակային մարմնական վնասվածքներ: Այդվել եւ վնասվել է 92 ավտոտրանսպորտային միջոց, Երեւանի քաղաքապետարանին պատճառվել է շուրջ 70 մլն. դրամի գույքային վնաս, քաղաքացիական անձանց՝ 301 մլն դրամի գույքային վնաս, հաղորդում է «Նոյյան տաղանը»:

Լեւոն Գուլյանի գործով քննությունը կվերսկսվի

Երեկ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Գագիկ Ավետիսյանի նախագահությամբ, բավարարեց 2007-ի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության շենքում մահացած Լեւոն Գուլյանի իրավահաջորդի բողոքի ներկայացուցիչներ Հրայր Ղուկասյանի եւ Արամ Կարախանյանի բողոքը, ինչը նշանակում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը կվերսկսի Լեւոն Գուլյանի մահվան առթիվ հարուցված քրեական գործի քննությունը:

Լեւոն Գուլյանը որպես վկա կանչվել էր ոստիկանության Շենգավիթի բաժին, հետո նրան տեղափոխել էին ՀՀ ոստիկանության շենք, որ նա մահացել էր: Ըստ ոստիկանության, նա փախուստի փորձ կատարելիս ընկել է 2-րդ հարկից ու մահացել, ըստ հարազատների՝ Լեւոնին ծեծելով սպանել են ոստիկանները:

Դիմա դատախազությունը 10 օր ժամանակ ունի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու:

Իսկ դատարանի երեկվա որոշումից հետո Լեւոն Գուլյանի իրավահաջորդի ներկայացուցիչ Հրայր Ղուկասյանը հայտարարեց, որ դատարանի որոշումը դրական քայլ է, բայց վերջնական արդյունքի հասնելու համար բավարար չէ: Ն. Մ.

Քաղբանտարկյալների հարցերով դիմել են Եվրոխորհրդին

Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի իրավապաշտպանները դիմել են Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովին (ԵԽԽՎ)՝ երեք երկրներում քաղբանտարկյալների հարցերով հատուկ զեկուցող նշանակելու խնդրանքով:

Հայաստանի Հելսինկյան ընկերակցության նախագահ **Միհայել Դանիելյանը** «Ազատություն» ռադիոկայանին հայտնել է, որ. «Այս նախաձեռնությունը բխում է ԵԽԽՎ-ում դեռ 2001-ին ընդունված բանաձեւից, որում ամրագրված էր, որ հարավկովկասյան երեք երկրներում քաղբանտարկյալների առկայության մասին զեկույց պետք է պատրաստվի»: «Այս տարվա ապրիլին Կիեւում կայացած՝ World Movement for Democracy կոնգրեսի ժամանակ երեք երկրների վեց իրավապաշտպան կազմակերպությունների ղեկավարներով եկանք համաձայնության, որ պետք է հանդես գալ նման նախաձեռնությամբ: Արձագանք ԵԽԽՎ-ից դեռ չենք ստացել», ասել է Միհայել Դանիելյանը: Հայաստանից դիմումը ստորագրել է նաեւ Հելսինկիի քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի ազգային կոմիտեի ղեկավար Անահիտ Բայանդուրը:

Թիվ 17-ում նոր ընտրություններ

Օգոստոսի 24-ին թիվ 17 ընտրատարածքում կանցկացվեն ԱԺ պատգամավորի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություններ: Այս մասին ԿԸՀ-ն որոշում կայացրեց հունիսի 6-ի նիստում՝ հիմք ընդունելով տվյալ ընտրատարածքից ԱԺ-ի պատգամավոր Հենրիկ Աբրահամյանի պատգամավորական լիազորությունները դադարած համարելու մասին ԱԺ-ի հունիսի 5-ի արձանագրությունը: Հ. Աբրահամյանի, նախագահի աշխատակազմի ղեկավար Հովիկ Աբրահամյանի եղբոր, պատգամավորական լիազորությունները, ըստ ԱԺ արձանագրության, դադարած են համարվել, քանի որ նա խախտել է սահմանադրության 65 հոդվածի 1-ին մասի պահանջը: Ըստ այդ հոդվածի, պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական աշխատանքից: Մեկ այլ որոշմամբ ԿԸՀ-ն Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ՀՅԴ-ի ընտրանքի ցուցակից պատգամավոր գրանցեց տարածքային կառավարման փոխնախարար Բագրատ Սարգսյանին: Որոշման հիմքը գլուխգանձության նախարար նշանակված Արամայիս Գրիգորյանի պատգամավորական լիազորությունները դադարած համարելու մասին ԱԺ արձանագրությունն էր, հաղորդում է «Նոյյան տաղանը»:

ՆԵՐԲԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Չեւ ենք անում, որ մամուլն ազդեցություն չունի

Հայաստանում մի տեսակ անհասկանալի իրավիճակ է: Քաղաքական կյանքը մի երկու- երեք չերեւացող շերտ ունի, բացի արտաքին եւ ֆորմալ դրսեւորումներից: Եթե միայն տեսնում ես վերին շերտը, կարելի է ասել, որ համարյա բան չես տեսնում: Բայց եթե կարողանաս խորանալ չերեւացող շերտի մեջ, եւ դրանից էլ այն կողմ տեսնել գաղտնածածուկ խարդավանքների կաթսան, կիասկանաս, որ հասարակային գործընթացները 95 տոկոսով տարբերվում են խորհրդային գործընթացներից: Կարելի է ասել, որ մերոնք եւս անցնում են խորհրդային կառավարման, եւ այդ խնդրում մամուլն ամենեւին էլ վերջին տեղը չի գրավում:

Իսկ խորհում եռացող կաթսայից առայժմ առանձին հրվիճակներ են մեկ-մեկ դուրս ժայթում, եւ որոնց մեծ մասը նույնիսկ հատուկ ուղղորդված եւ մտածված է: Բավական է հայացք նետել մեր ՁԼՄ-ներին՝ հասկանալու համար ով, ինչ, ում դեմ եւ ինչու: ՁԼՄ-ներն իրենք վաղուց արդեն կառավարման եւ ուղղորդման գործիք են դարձել գոնե Հայաստանում, եւ ով անընդհատ զեկուցում է գում, թե դրանք ազդեցություն չունեն հասարակական կյանքի վրա, խորամեսն սխալվում է փաստորեն: Իհարկե, դրանց, ասենք միջազգային կառույցներից նեսված անտեղյակ հայացքն անկասող է հայտնաբերել չերեւացողը, ինչպես որ մեր հայկական հնարամտությունից անտեղյակ միջազգային դիտորդը չի կարողանում բացահայտ խախտում հայտնաբերել՝ «ընդհանուր առմամբ խաղաղ» ընտրությունների ընթացքում: Բայց եթե բոլոր թելի ծայրը՝ կենտրոնը գտնելը մեծ դժվարություն չէ: Օրինակ՝ հենց այն լուրը, որ օրեր առաջ մամուլում հայտնվեց, թե Հովիկ Աբրահամյանը ԱԺ պատգամավոր է ընտրվելու թիվ 17 ընտրատարածքում, մանրամասը վայր դրած եղբոր՝ Հենրիկ Աբրահամյանի փոխարեն, որոնցից գա Ազգային ժողով ու նախագահ դառնա Տիգրան Թորոսյանի փոխարեն: Սա կարծում եք հասարակ լո՞ւր էր, կամ աղյուսեղեկատվությո՞ւն, կամ մոտիանոցի՝ հանդեպ Տիգրան Թորոսյանի: Ոչ, սա նախապատրաստում էր հասարակությանը, ամենահավանական լուրն էլ ինքնաթիռ կամաց-կամաց ընտել է դառնում ականջի համար եւ ինչ- որ պահի ընդունվում որպես կայացած իրողություն: Եվ դա բոլորովին էլ լրագրողների մտածածը չէ, այլ շատ իրական սկզբնաղբյուր-կառավարող ունի: Հանենայն դեպս լուրի առաջին կեսը երեկ իրականություն դարձավ, Հենրիկ Աբրահամյանը վայր դրեց մանդատը, եւ ԿԸՀ-ն թիվ 17 ընտրատարածքում երեկ որոշեց խորհրդարանական լրացուցիչ ընտրություններ նշանակել օգոստոսի 24-ին: Այսինքն՝ այդ անհավանական լուրի առաջին մասն արդեն իրականություն է:

Տես էջ 3

Արմեն Հարությունյանը համոզված է, որ իր հարցադրումներին, այնուամենայնիվ, պատասխաններ կտրվեն

Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի առաջին զեկույցը, որն արժանացավ արդարադատության նախարարության եւ գլխավոր դատախազության առարկություններին, այդուհանդերձ անտեղի չեղավ: Երեկ ՀՀԿ գրասենյակում Քաղաքացիների միության նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպման ժամանակ ՄԻՊ **Արմեն Հարությունյանը** համոզմունք հայտնեց, որ զեկույցում իր ներկայացրած հարցադրումներն այնուամենայնիվ պատասխաններ կստանան. «Ուրիշ տարբերակ չեմ տեսնում, դա մեր հասարակության հեռ կապված խնդիր է: Գուցե պատասխանելով պարզվի, որ հարցը խոր ձեւակերպված չէր, բայց ոչինչ, թող պատասխանը տվի, որ կասկածները վերանան հանրության մեջ: Դրանով հանրության լարվածությունը մեկ էլեմենտով կիջնի»:

Արմեն Հարությունյանը հնգամյա ժամանակ հորդորեց չմտահոգվել, թե ինչն անցել է իր լիազորությունների սահմանը եւ հաղթահարության մեջ մտել: Նա հարադարակել է իր զեկույցը, որտեղ հակակշիռների առումով իրավական հարցերի անմիջականորեն առնչվել են հաղթահարությանը. «Հորդորում եմ չանհանգստանալ, մենք հստակ գիտենք մեր լիազորությունների սահմանը եւ ընդհանրապես դրանց գերազանցության մասին խոսելն անիմաստ եմ համարում: Եթե ինչ-որ բաներ էլ տեխնիկական տեսակետից կարելի էր մի իդ այնպես գրել, որ դիմացինի համար ավելի ընկալելի լիներ, մի գուցե, բայց այն հարցադրումները, որոնք մենք դրել ենք, կարծում եմ, շատ հստակ հարցադրումներ են: Արհեստական է այդպիսի հարցադրումը դնելը, թե դա հաղթահարության վերլուծություն է, հաղթահարություն է: Որեւէ մեկն այսօր չի կարող հակակշիռների մասին խոսել, իսկ եթե երկրում ուզում ես հարցի վերաբերյալ նորմալ առաջարկ անել, դու նաեւ պետք է հաղթահարական ռեալիզմի պայմաններում այդ հակակշիռների հանգակարգի մասին խոսես: Հնարավոր չէ այդ մասին խոսել եւ հաղթահարությանն ընդհանրապես չկոչել, բայց դա հաղթահարական վերլուծություն չի կարելի կոչել»: Մինչդեռ, հիշեցնենք, արտահերթ զեկույցով հանդես գալու ՄԻՊ իրավունքը գլխավոր դատախազը չի վիճարկել: Սակայն, ըստ գլխավոր դատախազի, «Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ պատասխանի իրավասությունների շրջանակը ընդգծված է եւ սահմանափակվում է պետական մարմինների, ՏԻՄ-երի եւ դրանց պաշտոնատար անձանց խախտած մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանությամբ, եւ ինչպիսի լիազորություն էլ նա ներկայացրած լինի, այդ թվում նաեւ հանրապետական զեկույցի տեսքով, չպետք է դուրս գա իրեն օրենքով վերապահված իրավասության սահմաններից»:

Քաղաքացիական միության նախագահ Հակոբ Հովհաննիսյան եւ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյան

Սա առարկությունների մասով, ինչի տրամադրությունը նախօրեին ողջ օրը թեւաթել է ԱԺ հանձնաժողովում: Ու չնայած բոլոր հանձնարարականներին, Արմեն Հարությունյանը խորհրդարանական հանձնարարականից գոհ էր. «Սկսվեց մեղադրանքներով, բայց վերջացավ կառուցողական հանձնարարականներով»: Պաշտպանը նշեց, որ իր հարցադրումների պատասխանները պետք է լինեն, որպեսզի հասարակության մեջ կասկածամտությունն ավելի չխորանա՝ հատկապես, վստահելով դեֆորմացված ինֆորմացիայի դաշտը, երբ գերիշխում են ասեկոսեները:

Մարտի 1-ի դեպքերի անկախ հետաքննության պահանջով հավաքված ընդդիմադիր գործիչները պաշտպանին ներկայացրել իրենց հուզող հարցերը, պահանջեցին մարտի 1-ի մեղավորների բացահայտումը:

«Կովկաս» վերլուծական կենտրոնի ղեկավար, քաղաքագետ **Սամվել Մարգայանը** նշեց, որ մարտի 1-ի դեպքերը ձեռնտու էին ներկա նախագահ Սերժ Սարգսյանին, որը կարող էր հրաժարվել այդ ձեւով իշխանությունը սպանձնելու իրողությունից. «Սերժ Սարգսյանը որոշել էր ամեն գնով վերցնել իշխանությունը: Սա շատ կարեւոր է, քանի որ մարտի 1-ը միջոց է եղել օլիգարխիկ համակարգը պահպանելու համար»:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ակնկալվող արդյունքները վառելիքաէներգետիկ եւ բնական պաշարների համակարգում

Կառավարության ծրագրում էներգետիկայի ոլորտում քաղաքականությունը նպատակաուղղվելու է էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը, որը ենթադրում է էներգակիրների ներկրման ուղիների եւ էներգիայի արտադրության ձեւերի ընդլայնում, տարածաշրջանային էներգահամակարգին ինտեգրում, ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ նվազագույն ծախսերով էներգահամակարգի զարգացման խթանում՝ անվտանգության, էներգամատակարարման հուսալիության եւ շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պահանջների կատարմամբ: Այս առումով հրատապ լուծում են պահանջում արտադրության հզորությունների սերնդափոխությունը եւ արդիականացումը, որոնց իրականացմանն են ուղղվելու օտարերկրյա ներդրումներից եւ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացվող վարկային միջոցները: Այստեղ կառավարության քաղաքականությունն իրականացվելու է նախ՝ պետության մասնակցության կրճատմամբ եւ մասնավոր ներդրումների ներգրավման տարբեր եղանակների կիրառմամբ, երկրորդ՝ նոր միջուկային էներգետիկ հզորությունների ստեղծմամբ, միաժամանակ իրականացնելով ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի անվտանգության բարձրացում եւ շահագործումից հանելու նախապատրաստում: Երրորդ՝ առկա հիդրոռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանն ու էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստեղծմանն ուղղված գիտական եւ ինժեներատեխնիկական հետազոտությունների իրականացմամբ: Հանրապետությունում գազամատակարարման ցանցի ընդլայնում, ինչպես նաեւ կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքավորումների շահագործման անվտանգության ապահովում, մասնավոր ներդրումների խթանում այն բնագավառներում, որտեղ դրանք կարող են հանգեցնել էներգախնայողության եւ էներգաարդյունավետության բարձրացման՝ ջերմամատակարարման ոլորտում առավել արդյունավետ համակարգերի ներդրմամբ:

Երեկ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար **Արմեն Մովսիսյանը** անդրադառնալով Մեղրիում նավթամթերքման գործարանի կառուցման աշխատանքներին՝ նշեց, որ իրականացվում են տեխնիկական աշխատանքներ, ստեղծված է հայ-իրանական հանձնաժողով եւ մոտ 2-3 ամիս հետո կարվի կոնկրետ հայտարարություն նավթազտարանի հետագա գործընթացի մասին: Նախարարը նաեւ հավելեց, որ նման խոշոր ծրագրերի աշխատանքները երկար ժամանակ են պահանջում:

Նոր ատոմային էներգաբլոկի կառուցման օգտին են խոսում նաեւ միջուկային վառելիքի եւ բնական գազի գների աճի միտումների կանխատեսումները մինչեւ 2050 թվականը: Բնական գազի գնի աճի պարագայում, որը պայմանավորված կլինի բնական գազի պաշարների նվազմամբ եւ արդյունաբերող երկրների թվի կրճատմամբ, միջուկային վառելիքի գինը կարող է դիտարկվել համեմատաբար կայուն:

Նոր ատոմային էներգաբլոկի թողարկումը նվազագույն ծախսերով միակ տարբերակն է, որն առաջնային վառելիքի տեսակների բազմազանության, վառելիքի մատակարարման տեսակետից ամենավստահելին լինելուց բացի ապահովում է նաեւ էներգետիկ անվտանգության ու անկախության, ինչպես նաեւ բնապահպանական անհրաժեշտ մակարդակ:

ՆԱՒԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հակակոռուպցիոն գրասենյակ Սյունիքի մարզում

ԵԱՀԿ գրասենյակից հաղորդում են, որ հունիսի 6-ին ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի հովանավորությամբ Գորիսում բացվել է հակակոռուպցիոն ընդունարան: Կենտրոնը խորհրդատվություն կտրամադրի քաղաքացիներին իրավաբանական հարցերով, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների եւ ընթացակարգերի, ինչպես նաեւ պետկադաստրի, անձնագրային, նոտարական գրասենյակների, եւ տեղական մակարդակով հանրային ծառայություն իրականացնող այլ մարմինների վերաբերյալ: Կենտրոնը նաեւ աջակցություն կտրամադրի դաշտական բողոքների ներկայացման հարցում՝ աշխատանքային իրավունքի, սոցիալական պաշտպանության, քաղաքացիական եւ վարչական իրավունքների հետ կապված: Կենտրոնը չորրորդն է ԵԱՀԿ հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում գործող: Մյուս կենտրոնները բացվել են անցյալ տարի Երեւանում, Մարտունիում՝ Գեղարքունիքի մարզ, եւ Ստեփանավանում՝ Լոռու մարզ:

Բարոնտիու անվան դպրոց բացվեց Արցախում

«Հայաստան» համահայկական հիմնադրամի տարեկան ժողովին մասնակցելու առիթով Հայաստանում էր նաեւ Կանադայի Տորոնտո քաղաքի ՀՀՀ-ի մասնաճյուղի պատվիրակությունը՝ ղեկավարելով Մկրտիչ Մկրտիչյանի գլխավորությամբ: Վերջին 3-4 տարիներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի մասնաճյուղի հանգանակած գումարներով Արցախում դպրոցներ են կառուցվում ու բացվում: Այս տարվա մայիսի 30-ին Արցախի Վերին Հորաթաղ գյուղում բացվեց նոր դպրոց: Այդ մասին տեղեկացնում է Մկրտիչ Մկրտիչյանից, երբ նա այցելել էր **«Ազգի»** խմբագրատուն: «Այդ դպրոցի կառուցումը առանձնահատուկ էր, նշեց պրն Մկրտիչյանը, քանի որ հենց դրամահավաքի ժամանակ որոշվել էր ու հայտարարվել, որ դպրոցը պետք է կոչվի Արցախի մեծ բարեկամ բարոնտիի Քեռլայն Քոխի անունով: Սարտանգի ջրամբարի, Դոմբոնի հանգավայրի մոտ վեր է խոյացել հառահարկ մի գեղեցիկ դպրոց, որի կառուցման ու կահավորման համար ծախսվել է 360-370 հազար ԱՄՆ դոլար: 12 դասասենյակներով, բուժկետով, հանգարգելային տահով, գրադարանով, լաբորատոր բոլոր տարեով հագեցած դպրոցը նախատեսված է 150 աշակերտի համար: Դպրոցում հատուկ կառուցվել է մեծ դահլիճ, որը յուրօրինակ ճաշակության կենտրոն է դառնում»: Դպրոցն ունի առանձին կաթսայատուն, որն ապահովելու է ջեռուցումը ձմռան ամիսներին:

Դպրոցի բացման առիթով Լոնդոնից ժամանել էր բարոնտիի Ք. Քոխը իր որդու, հարսի եւ չորս թոռների հետ: Դպրոցի պաշտոնական բացմանը մասնակցել են ԼՂՀ-ի վարչապետ Արա Հարությունյանը, Մարտակերտի մարզպետը եւ ուրիշ պաշտոնատար անձինք: Դպրոցի բացման կառնիր ժապավենը կտրելու պատիվը տրվել է բարոնտիի Քոխին, վարչապետին, որն Մկրտիչյանին եւ դպրոցի սաներից մեկ տղայի ու մեկ աղջնակի: Վերջիններիս է «հանձնվել» դպրոցի պատասխանատվությունը:

Պրն Մկրտիչյանից տեղեկացանք նաեւ, որ առաջիկայում մի նոր դպրոց էլ կառուցելու են Արցախի Մարտունիի շրջանի Սոլիսակաբեն գյուղում եւ արդեն հունիսի 8-ին նախատեսված է Տորոնտոյում անցկացնել հիմնադրամին նվիրված մեծ միջոցառում, որտեղ բանախոսն է լինելու անվանի փաստաբան Մարկ Կիրակոսը, եւ այդ օրն էլ կլինի Սոլիսակաբենի դպրոցի համար հանգանակությունը:

Ավելացնենք, որ Վերին Հորաթաղի դպրոցի մի քանի դասասենյակ անվանակոչվել է Տորոնտոյի երիտասարդների հանձնախմբի անդամ Մասիս Քեբիջյանի անվամբ, որը Տորոնտոյից Մոնրեալ 600 կմ հեռանվավազք է կատարել 5 օր ու հանգանակած գումարը նվիրել դպրոցի կառուցմանը: Դպրոցի հանդիսությունների դահլիճը անվանակոչվել է նշանավոր դաշնակահար Սերուժ Գրաբյանի անվամբ, ով հատուկ դաշնամուրային համերգ էր տվել ու ողջ հասույթը նվիրել հիմնադրամին: Երրորդ ցուցատախտակը, որ փակցվել է դպրոցի դասասենյակներից մեկի մուտքին՝ «Տորոնտոյի հայկական դպրոցի աշակերտների կողմից՝ Արցախի դպրոցի աշակերտներին» գրառությամբ է:

«Տեղում ճշտեցի, որ Արցախում երեխաների ծնելիությունը բարձր է, հրաժեշտից առաջ ասաց պրն Մկրտիչյանը, ուստի մենք խնդիր ունենք դպրոցների կառուցումը շարունակելու»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԻՍԿԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ

Հրատարակության մեջ է դրել

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻՆ ԱԲԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅՈՒՐԻՆՅԱՆ / հեռ. 529221

Հասցեագրատուն (գովազդ) / հեռ. 582960

Լուսագրության սենյակ / հեռ. 581841

Գանձապետ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահաղորդակցություն
/ հեռ. 529353

Գանձապետական հաշիվ՝
«Ազգ» թերթ

Թերթի նիութերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիր արգելվում են համաձայն ՀՅ հեղինակային իրավունքի մասին օրենքի

Նիութերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում

Գ. տարով յորդաբերները գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Իրան եւ Կովկաս». գիտաժողով Երեւանում

Երեկ Երեւանի Golden Palace հյուրանոցում սկսվեց «Իրան եւ Կովկաս. միասնություն եւ բազմազանություն» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել է «Իրան եւ Կովկաս» միջազգային արեւելագիտական հանդեսը (Լեյդեն, Հոլանդիա www.brill.nl/ic), համագործակցությամբ ԵՊՀ իրանագիտության ամբիոնի, Իրանագիտության կովկասյան կենտրոնի (Երեւան), Արիա միջազգային համալսարանի (հիմնադիր են «Գրանդ հոլդինգ» ընկերությունը եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը), Իրանի արդի պատմության գիտահետազոտական ինստիտուտի (Թեհրան) եւ Ակադեմիական համագործակցության եւ օժանդակության հայկական ասոցիացիայի-ARMACAD (Երեւան): Երկօրյա գիտաժողովին մասնակցում են աշխարհի 22 երկրներից ժամանած ավելի քան 80 եւ 20 հայաստանցի գիտնականներ: Գիտաժողովին հավաքված են նաեւ քաղաքական գործիչներ, դիվանագետներ: Միջոցառումը բացեց գիտաժողովի կազմակերպիչ, ԵՊՀ-ի իրանագիտության ամբիոնի վարիչ, «Իրան եւ Կովկաս» հանդեսի գլխավոր խմբագիր եւ Արիա միջազգային համալսարանի ռեկտոր **Գառնիկ Ասատրյանը**: Ըստ վերջինիս, «մեծ ակնկալիներ կան այս գիտաժողովից, այն հնարավորություն է ստեղծում Հայաստանը հասարակական գիտությունների գիտական խոշոր կենտրոն դարձնելու»: Գառնիկ Ասատրյանը նշեց նաեւ, որ գիտաժողովն առաջինն է աշխարհում, որ իր բովանդակային ընդգրկունությամբ ու հասակ հարցադրումներով գիտական մեկ ուղղվածության մեջ է միավորում ամբողջ Իրանա-կովկասյան տարածաշրջանը՝ կենտրոնական Ասիայից մինչեւ Բոսֆորի նեղուց, Դերբենդից մինչեւ Պարսից ծոց: Երկօրյա գիտաժողովի ընթացքում ներկայվելու են հասարակական գիտությունների ոլորտի տարածաշրջանային գրեթե բոլոր հիմնարար ուղղություններին վերաբերող հարցեր եւ խնդիրներ՝ պատմություն, գրականություն, լեզվաբանություն, արվեստ, մշակույթ, քաղաքականություն, մարդաբանություն, հնագիտություն, կրոն, պատմական եւ քաղաքական աշխարհագրություն եւ այլն:

Երեկ առավոտյան Golden Palace հյուրանոցում տեղի ունեցած բացման արարողությանը ողջույնի խոսքով ելույթ ունեցան նաեւ Իրանի ժամանակակից պատմության ինստիտուտի ներկայացուցիչ **Մուսա Ֆաթանին**, Երեւանի պետական համալսարանի ռեկտոր **Արամ Սիմոնյանը** եւ ուրիշներ: Առաջին օրվա հիմնական զեկուցողն էր հայտնի **Պողոս Լեւոն Զեֆիյանը** «Մշակույթը, քաղաքականությունը եւ գիտությունը մերձկովկասյան տարածաշրջանում» թեմայով: Հաջորդ օրերին ելույթներով հանդես կգան նաեւ Վրաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Եվրոպայից եւ Իրանից ժամանած մեծ թվով գիտնականներ: Քննարկումների հիմնական թեմաներն են լինելու տարածաշրջանային զարգացումները, հայ-իրանական հարաբերությունները, էներգետիկ հարցը, Ռուսաստանի դերակատարումը տարածաշրջանում եւ այլն:

Գիտաժողովը շարունակական բնույթ է կրելու եւ յուրաքանչյուր երկու տարին մեկ Հայաստանում համախմբելու է տարածաշրջանի հիմնախնդիրներով զբաղվող գիտնականներին եւ փորձագետներին:

ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Արժեկտրոնային նոր պարտատոմսեր հունիսի 24-ից

Հայաստանի ֆինանսական շուկայում այս նորամուծությունը արդեն իսկ դրական օրինակ ունի

Հայաստանի բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ կտեղաբաշխվեն 400 միլիոն դրամ ծավալով անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսեր: Այս մասին երեկ հրավիրված ասուլիսում հայտարարեց «Առարատբանկ»-ի վարչության նախագահ, գործադիր տնօրեն **Ատոս Օսիպյանը**:

Դեռեւս 2007-ի մայիսի 10-ին այս բանկը իրականացրեց մեկ տարի մարման ժամկետով կուպոնային պարտատոմսերի առաջին տեղաբաշխումը: Այն ժամանակ թողարկման ընդհանուր ծավալը կազմել էր 250 մլն դրամ, թողարկվել էր 25000 պարտատոմս՝ 10000 դրամ անվանական արժեքով: Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը 2007-ին կազմել է 8 տոկոս, արժեկտրոնային վճարումների պարբերությունը՝ 3 ամիս:

Պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում, իսկ պարտատոմսերի ողջ շրջանառության ընթացքում ֆոնդային բորսայում իրականացվել է 94 գործարք՝ 405 մլն դրամ ծավալով:

Օսիպյանի ներկայացմամբ, նախորդ տարվա փորձն ու առյուծներն էլ պայմանավորել են պարտատոմսերի երկրորդ թողարկման նախաձեռնությունը: 10000 դրամ անվանական արժեքով 40000 պարտատոմսերը տեղաբաշխվելու են 9 տոկոս տարեկան տոկոսադրույքով եւ 18 ամիս մարման ժամկետով: Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումն իրականացվելու է մինչեւ հունիսի 24-ը:

«Առարատբանկին» տեխնիկական աջակցություն է տրամադրել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական ոլորտի զարգացման ծրագիրը: Ծրագրի ղեկավար **Ռոբերտ Սինգլեթարին** ընդգծեց պարտատոմսերի թողարկման կարեւորությունը, ավելացնելով, որ այն նշանակալի նորամուծություն է Հայաստանի ֆինանսական շուկայում: Սինգլեթարին հույս հայտնեց, որ այլ բանկեր եւս կհետեւեն «Առարատբանկի» օրինակին:

Անդրադառնալով Հայաստանում բնակչության ձեռքին մնացող գումարներին՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրի ղեկավարը նշեց, որ այդ գումարները զգալի են, ինչն էլ որոշ առումով պայմանավորված է ֆինանսական շուկայի հանդեպ անվստահությամբ, նաեւ ավանդաբար գումարը տանը պահելու սովորությամբ:

Իսկ ավելի ընդհանրական մոտեցմամբ Սինգլեթարին գտնում է, որ վերջին 18 ամիսների ընթացքում ֆինանսական ոլորտում գրանցվել են կայուն միտումներ, ինչը կազդի տնտեսության վրա, եթե տնտեսության մեջ էլ կենտրոնացում լինի արժեք ավելացնող գործընթացների վրա: Մասնավորապես, ըստ Սինգլեթարի, պղնձի արդյունահանումն այլ բան է, իսկ պղնձե արտադրանքի տալը՝ մեկ այլ:

Մյուս կողմից, Հայաստանի այս ոլորտում զարգացման հարցում նշանակություն ունեցող գործոն են միջազգային փոխանցումները, որոնք, ինչպես նշեց Սինգլեթարին, ֆինանսական շուկայի վրա թարմացուցիչ ազդեցություն են ունենում:

Ա. ՏԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Բանակցությունները կշարունակվեն

1-ին էջից

Հայաստանի արտգործնախարարը նշեց, որ բանակցություններն ընթանում են մադրիդյան առաջարկությունների հիման վրա, որոնց առնչությամբ կան կողմերի տեսակետներն ու մեկնաբանությունները, որոնց շուրջը պետք է շարունակել աշխատանքները:

Էդմար Մամեդյարովը, հաստատելով իր հայ գործընկերոջ տեսակետը, ասաց, որ պետք է աշխատանք տարվի եւ կողմերի դիրքորոշումները նկատի ունենալով՝ մոտեցվեն ոգին կետերը: Արտաքին գործերի նախարարը հայտնեց, որ այս ամսվա վերջին նախատեսվում է համանախագահների այցը տարածաշրջան՝ ավելացնելով, որ ժամկետներն առաջիկայում կնշվեն:

Ամերիկացի համանախագահ **Մեթյու Բրայզան** հանդիպումն անվանեց հաջող եւ ճանաչողական: Նա նշեց, որ դա հնարավորություն է տալիս շարունակելու աշխատանքը մադրիդյան առաջարկների շուրջ եւ բարելավելու դրանք: Ֆրանսիացի համանախագահ **Բերնար Ֆասիեն** ավելի հակիրճ էր: «Ճշտել, լավացնել, լրացնել», ահա այսպես նա արտահայտվեց մադրիդյան առաջարկների առնչությամբ:

Յուրի Մերզլյակովի կարծիքով էլ, նախագահների հանդիպման ժամանակ կար նորմալ աշխատանքային մթնոլորտ: «Կշարունակենք աշխատել՝ կողմերի մոտեցումները լսելով», եզրափակեց ռուսաստանցի համանախագահը:

Ինչպես արդեն նշեցինք վերեւում, երեկ ԱՊՀ երկրների նախագահների համար երկկողմ հանդիպումների օր էր՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ: Քննարկվեցին երկու երկրների քաղաքական, տնտեսական հարաբերություններին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Այն փաստը, որ Հայաստանի պատվիրակության կազմում էր եւ Ռուսաստանի նախագահի հետ հանդիպմանը մասնակցեց նաեւ «Հայռուսգազարդ» ընկերության տնօրեն Կարեն Կարապետյանը, թույլ է տալիս եզրակացնել, որ երկու երկրների նախագահների հանդիպման ժամանակ կարեւոր նշանակություն է տրվել էներգետիկային եւ մասնավորապես Հայաստանի գազամատակարարմանը, գազի սակագներին եւ այլ խնդիրներին:

Երկու նախագահների հանդիպման ժամանակ **Դմիտրի Մեդվեդեւը** Սերժ Սարգսյանին հրավիրեց առաջիկայում պատասխանական այցով ժամանել Մոսկվա: «Երբ Ձեզ հարմար կլինի, ուրախ կլինենք Ձեզ տեսնել Ռուսաստանում, անցկացնել լիարժեք բանակցություններ եւ շարունակել այն համագործակցությունը, որն այսօր գոյություն ունի մեր երկրների միջեւ», ասաց Ռուսաստանի նախագահը: **Սերժ Սարգսյանը** շնորհակալություն է հայտնել հրավերի համար եւ բարձր գնահատել հայ-ռուսական հարաբերությունները: «Մենք լավ հարաբերություններ ունենք, վստահ եմ, դրանք կխորանան», ընդգծեց Սերժ Սարգսյանը:

Այնուհետեւ տեղի ունեցավ ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովը, իսկ այսօր բացվեց 12-րդ միջազգային տնտեսական համաժողովը, որտեղ հիմնականում քննարկվում են էներգետիկ եւ տրանսպորտի ոլորտների խնդիրները:

Ձեւ ենք անում, որ մամուլն ազդեցություն չունի

1-ին էջից

Դրանից առաջ էլ գոտկատեղից ներքեւ հագվածներով նույն մամուլը վարկաբեկում էր Տ. Թորոսյանին՝ իհարկե, ոչ սրացավության կամ արդարության պատճառի անտահախնդիր մղումներից ելնելով, այլ կոնկրետ նպատակներով, հասկանում էր դա տվյալ լրատվամիջոցը կամ լրագրողը, թե ոչ, կարեւոր չէ, պատվիրատուն շատ լավ գիտեր, թե ինչ է ուզում, «ինչու է ուզում: Մնաց, իրականությունն դառնա մեր նշած լուրի երկրորդ՝ ԱԺ նախագահ դառնալու մասը:

Կամ, եթե ուշադիր նայեք՝ մեր պետական կառույցների մի մասը իր լրատվական ծառայությունները վերջերս ամրագրում է մի շարք գործող լրագրողներով, ի տարբերություն առաջվա հորանջող մարդկանց վերցնելու հակված: Գործող լրագրողներից շատերն աշխատակցում են տարբեր, հաճախ իրար հակընդդեմ թերթերի: Թվում է՝ տրամաբանություն չկա: Շատ լավ էլ կա, եթե մտածենք, որ մեր մամուլը մասնակից է կառավարմանը: Ահա երբ պետք է՝ այսուայն կառույցը (կամ դրա իրական տերը) այսուայն պատասխանի դեմ առանց ավելորդ ծիգուքանի ու ծախսի կոմորոմաս բաց կթողնի մամուլ, կամ տվյալ պատասխանի համար անցանկալի տեղեկատվության արտահոսք կանի, ու պատրաստ է: Ընդհանրապես՝ հիմա մամուլը շատ ճգտիս արտացոլում է մի տեսակ անելիք հասակ չմնացող իշխանության տարբեր թեւերի մանրակերտը: Էլի ամենաբերեւացող օրինակները կարելի է բերել: Այն, որ Եխխվ բանաձեւի կատարման հանդեպ իշխանական թեւերում հասակ եւ միանշանակ պատկերացում չկա՝ դա երեւում է եւ խորհրդարանում, մեծամասնությունը կազմող պատգամավորների եւ, հատկապես, ՀՅԿ-ի ոչ հասակ դիրքորոշումից, գործարարների երկդիմի պահվածից, ԵԵԽՎ նստաշրջանից ընդամենը 10-12 օր առաջ միասնական որոշումներ կայացնել չկարողանալուց, ու ոչ՝ հասակեցումները ոչ թե ուղիղ հանդիպումներով են լինում, այլ մամուլում միմյանց վրա «բոչկա գլորելով», միմյանց ուժերը չափում հենց մի քանի թերթով մեսից ուղարկելով, սա եւս տեսանելի է նույն ԶԼՄ-ներում: Թեկուզ մարդու իրավունքների պատասխանի զեկույցը, որը ո՛չ իշխանական կառույցներ, ո՛չ ընդդիմությունը մի կարգին քննարկումների չարժանացրին, այլ մամուլով դա միմյանց վրա էին թափահարում, հենց դասախազությունն ու արդարադատության նախարարությունն էլ «հայլուտվ» էին պատասխանում կամ առարկում: Եվ մեր թղթակիցն էր նկատել, դա էլ կարելի է դիտարկել ներիշխանական մրցակցության համատեքստում, հանի որ Արմեն Հարությունյանը, որքան էլ նրան Քոչարյանն անհաջող կարգ անվանի, չի դադարել Քոչարյանի մարդը համարվելուց: Եվ մամուլը, նկատելով կամ առանց նկատելու սեփական կառավարողներից վերցրել է դասը եւ այս վերոհիշյալ դրվագին գործոն է դարձնում՝ հետագա հետեւանքներով: Իսկ թե ինչ դեր են խաղալու ԶԼՄ-ներն առաջիկա տասնօրյակում, հիմիկվանից արդեն խոսելով իբր երկմտանքի դարձող մեր քաղաքականների ու ջրից միտ չոր դուրս եկող ծամբարափոխների մասին, ինչ անիմաստ իրարանցում են ստեղծելու՝ դեռ կտեսնեք:

ԱՐԳԻՇՏԻ ՀԱՍԿՅԱՆՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 12.00-ին՝ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի Տիգրան Մեծ սրահում տեղի կունենա «Հայէկոնոմբանկի» տնօրեն Դավիթ Սուքիասյանի ասուլիսը:

◆Ժամը 12.00-ին «Ուրբաթ» ակումբում ներքաղաքական անցուդարձի շուրջ դիտարկումներով հանդես կգա Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցության նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը:

◆Ժամը 12.00-ին «Հայելի» ակումբում կբանաձեւեն Անուշ Սեդրակյանը եւ Մերուժան Տեր-Գուլանյանը:

Հունիսի 9

◆Ժամը 13.00-ին «Հայացք» մամուլի ակումբի հյուրերն են ԱԺԿ նախագահ Շավարշ Քոչարյանը եւ Լեւոն Մելիք-Շահնազարյանը: Թեմա՝ «ԼՂՀ հիմնահարց»:

◆Ժամը 15.30-ին «Ուրբաթ» ակումբում ներքաղաքական խնդիրների մասին կխոսի «Հանրապետություն» կուսակցության խորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցը:

«Սահող ավազի վրա»

Հեռատեսային մի հաղորդման ժամանակ իշխանությունը ներկայացնող հաղարական գործիչներից մեկը հարցին, թե ո՞ր է իրենց գործունեության գլխավոր նպատակը, ասաց. «Հզոր պետություն կառուցելը»: Զարմանալի է, բայց փաստորեն պետական գործիչը չգիտեր, որ պետությունը, հզոր կամ պարզապես զարգացած, ընդամենը միջոց է գլխավոր նպատակին՝ մարդու բարօրությանը հասնելու համար:

Ինչո՞ւ են առաջընթացի ազգերն այսքան շաս: Որովհետև հաղարական դասը՝ ինչպես պոյսոր ջուր: Եվ նրանք, ովքեր առեն վարեցել են այդպիսի ջրում ձուկ որսալուն, անում են եւ կշարունակեն անել հնարավորն ու անհնարը, որպեսզի որսն հնարավոր է երկար ոչինչ չկիսվի: Նրանց ձեռքում է իրենց կողմից ղեկավարվող ոլորտների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը, հետեւաբար առաջնեկատվության բոլոր միջոցները: Այլապես, ինչպե՞ս բացատրել պետական ծրագրերի մի զգալի մասի իրականությունից այդչափ հեռու լինելը, երբ խնդիրը մեկ բան է, իսկ այն, ինչ փորձում են կամ առաջարկում բարեփոխել՝ այլ բան. ցավում է գլուխը, բուժում են փիրը եւ այդպես՝ հետտղական ու ծրագրված: Իսկ իրական խնդիրները, ինչպես թաքցված վերեր, գնալով խորանում են: Ինչ է նշանակում պետության նպատակը մարդու բարօրությունն է: Ընդամենը նշանակում է, որ պետությունը վարում է այնպիսի հաղարականություն, որը հանգեցնում է ընդհանուր սոցիալական առաջադիմության: Դա ենթադրում է հասարակության բարձր կենսամակարդակ, որին պետությունը ամբողջ ուժով պետք է նպաստի: Ամենը ինչ ունի իր որակը եւ արժեքը: Ազգության որակը, նույնն է, թե արժեքը, որոշվում է նրա ստեղծագործելու կարողությամբ, ներուժով, տաղանդի չափով, որի դրսեւորումը մշակույթն է: Իսկ տաղանդը կամ լինում է ինքնաշիր, կամ չի լինում: Եվ ուրեմն, կորցնելով մեր ինքնաշիրությունը, ազգային առանձնահատկությունները, մենք կորցնում ենք մեր որակը, հետեւաբար արժեքը: Ավելին, ազգային առանձնահատկությունները ճանաչելը եւ զարգացնելը, իմ կարծիքով, անհրաժեշտ պայման է ժողովրդի ստեղծագործական ձիրքը, ներուժը, հետեւաբար ազգի որակը պահպանելու համար:

Ինչո՞ւ ազգային ազատագրական շարժման գաղափարներով իշխանության եկածները այդպես խուսափեցին նույն այդ գաղափարներից: Սահմանադրության մեջ ազգային բառը դարձավ տարու, իսկ զինանշանում Արարատը փոխարինվեց այնքան, որ մի կետ մնաց, այն էլ մոլեգիպիկացիոն տարբերակով: Զինանշանը նույնպես խորհրդանիշ է, իսկ խորհրդանիշներով պետություն են կառուցում, նաեւ՝ հակառակը: Արարատը միայն հայկական զինանշանում կարող էր տեղ գտնել, որովհետեւ խորհրդանշում է հայության հարատեւությունը: Որեւէ այլ ժողովրդի մտքով չի անցնի Արարատը տեղադրել իր զինանշանում, որովհետեւ խորհրդանիշը իրավաբանական կատեգորիա չէ եւ չես կարող, ո՛չ գրավել, ո՛չ գնել, ո՛չ էլ յուրացնել, թեեւ կան այդպիսի փորձեր: Արծիվը եւ առյուծը, որոնց կերպարանքներով պատված է հայկական զինանշանը եւ որոնք խորհրդանշում են ուժ, ազգային խորհրդանիշ չեն եւ կան ամենուրեք: Փաստորեն մենք նախընտրել ենք բաբլոնը՝ հրաժարվելով ինքնաշիրությունից: Սա մի փոքր օրինակ է, որը բնորոշում է խոսքի եւ գործի մեջ եղած հակասությունը անկախ պետականության հիմնադրման առաջին տարիներից: Այդպիսի օրինակներն այնքան շաս են, որ կարող են օրինաչափ երեւույթ համարվել, ավելին՝ կենսակերպ, որ դրված է մեր պետականության հիմքում:

Ինքնության պահպանումը նույնպես ինքնանպատակ չէ, այլ մարդու համար է, քանի որ յուրաքանչյուր մարդ ուզում է պահպանել իր եսը, իր անհատականությունը, իր ազգային դիմագիծը եւ ապրել հոգեւոր բարձր չափանիշներին համապատասխան:

Փաստորեն հասարակության սոցիալական ապահովությունը եւ ազգային ինքնության պահպանումը (հասկանալի է՝ ազգային փոքրամասնությունների համար նույնպես) դառնում են հայկական պետականության երկու կարեւոր նպատակները՝ ուղղված գլխավոր նպատակին՝ մարդու, այս դեպքում Հայաստանի Հանրապետության բարգավաճմանը, բարօրությանը: Այդպե՞ս են կառուցված ազգային բազմաթիվ ծրագրերը, այդ նպատակների՞ն են ծառայում բնապահպանական, մշակութային, կրթական, սոցիալական, բարեգործական, առողջապահական, տնտեսական, հարկային եւ այլ բարեկանությունները, հիմնականում՝ ոչ: Արդյոք տնտեսական տնտեսությունը դիտվե՞լ է որպես միջոց եւ, ինչու ոչ, որպես լավագույն միջոց, հասարակության սոցիալական ապահովության համար, ցավո՞ք ոչ: Անհավատալի է, բայց իրականություն, որ անկախ պետականության սկզբնավորումից մինչեւ այժմ մեր պետական բարգավաճման մեջ բիզնեսը, այսինքն՝ շահույթը եղել է ոչ թե միջոց, այլ՝ նպատակ: Այսինքն՝ հասարակության շահը, երբեմն ապագա սերունդներինն էլ հեսը, սպրդասվել է-եւ սպրդասվում է մի խումբ մարդկանց բարեգործությունը: Այսօր բավական հաճախ գործածվող «պետություն մարդու համար» արտահայտությունը նման է օդից կախված հայտարարության, քանի որ այդ գաղափարը չի արտացոլվում օրենսդրության մեջ: Որեւէ ուզում է պետությունը թող ավելացնի սոցիալական ոլորտին տրամադրվող գումարները, այն, ինչպես անտակ տակառ, միշտ կենա դատարկ, որովհետեւ նախքան բյուջեի սոցիալական ուղղվածությունը, օրենսդրությունը պետք է սոցիալական ուղղվածություն ունենա եւ, իհարկե, կադրային քաղաքականության սկզբունքը պետք է փոխվի, որովհետեւ ժողովրդական ասացվածքն ասում է. «Գողը եթե տնից եղավ, եզը երդիկից կհանի»: Որեւէ ուզում է, պետությունը թող հայ մշակույթի օրեր կազմակերպի այս կամ այն երկրում, դրանք միշտ կծառայեն հակառակ նպատակին, ինչպես եղել է միշտ, առանց որեւէ բացառության, որովհետեւ ցուցադրելը վերջին գործն է, որ կարելի է անել, իսկ մինչ այդ պետք է զարգացնել արվեստագիտությունը, պատմագիտությունը, հնագիտությունը, որպեսզի գոնե իմանանք ինչ ցուցադրել եւ ինչպես: Թե չէ ցուցահանդեսի անունը դնում ենք «Սուրբ Հայաստան», ցուցադրում ենք հայկական արվեստի նշխարներ, իսկ պատերին փակցված մեծածավալ պատասեներով մեկնաբանությունները, նաեւ օտար լեզուներով, թարգմանված՝ երեւի ինտերնետից վերցված, սկսվում են այսպես՝ «Օսմանյան կայսրության տարածքում...», եւ ամբողջն՝ այս ոճով: Մի քանիսը կարդալուց հետո կոկորդս սեղմվեց վրդովմունքից եւ հարցով դիմեցի ցուցահանդեսի աշխատակցին, որը պատմաբան էր, թե նա կարդացե՞լ է դրանք: Նա պատասխանելու փոխարեն բազմանշանակ ասաց. «Գիտեմ ինչ եք ասում, ես ձեզ հետ լրիվ համաձայն եմ», եւ ավելացրեց, որ ո՛չ պատմության թանգարանը, ո՛չ ինստիտուտը կարող չունեն այդ ամենի հետ:

Երբ իրավունքը եւ պարտականությունը միմյանցով չեն պայմանավորված, այլ ոմանց իրավունք է տրված, իսկ մյուսներին՝ պարտականություն, երբ միջոցը եւ նպատակը փոխում են իրենց տեղերը եւ գլխիվայր է շրջվում տրամաբանությունը, սկսվում է անարդարությունը, որը պատճառվում է բոլորությամբ:

Այս ամենը նման է սահող ավազի վրա կառուցվող շինության: Եվ մենք դեռ շարունակում ենք հարկի վրա դնել հաջորդ հարկը՝ հույս ունենալով ճարտարապետական սխալ նախագիծը շինարարությամբ ծածկել:

ԿԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ
«Բարեփոխում» մշակութային կրթական հասարակական կազմակերպության նախագահ,
ՀՀ մշակույթի նախկին փոխնախարար

Թեթեյանցիները մայր հայրենիքում էին

Ընդունված ավանդույթի համաձայն, Լոս Անջելեսի Թեթեյան մշակութային միության Արշակ Տիգրանյան վարժարանի սաները այս տարի եւս այցելեցին Հայաստան: **«Ազգը»** հանդիպեց վարժարանի հոգաբարձուների խորհրդի անդամներ տկն **Սյուզի Պահաբրյանին** եւ տկն **Անգին Ղարիբյանին**, մեր թղթակիցը նրանց ուղեկցեց Երեւանի ու Գյումրիի Վահան Թեթեյանի անվան կրթօջախներ: Արշակ Տիգրանյան վարժարանի ավարտական դասարանի 25 աշակերտները Հայաստանի Թեթեյան գյուղերի երգանվարտների հետ ե՛ւ Գյումրիում, ե՛ւ Երեւանում մեկ աշակերտական սեղանի նստեցին ու մասնակից դարձան «Վերջին դասի» եւ «Վերջին զանգի» արարողություններին: Թեթեյանցիներին նոր կյանքի սեմին բարեմաղթանքներ հղեցին Երեւանում տնօրենուհի **Անահիտ Խալաթյանը**, Գյումրիում տնօրեն **Անտոն Փիլոյանը**, Ս. Պահաբրյանն ու Ա. Ղարիբյանը: Որոշներ անց, հազարավոր կիլոմետրեր իրարից հեռու ապրող ու սովորող թեթեյանցիները մտերմացան, հասցեներ փոխանակեցին ու խոստացան նոր ընկերությունը շարունակել հեռագրում: Թեթեյանցիները 12 օր շրջեցին մայր հայրենիքում ու հիացան Հայաստանի չնաշխարհիկ բնությամբ: Իրենց ստացած տպավորություններում նրանք նշում էին, որ շաս հուզվել են իր ամբողջ գեղեցկությամբ: Իսկ էջմիածնում նրանց ընդունել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսն ու օրհնության խոսք ասել: Իհարկե, մանրամասն նկարագրել թեթեյանցիների ստացած տպավորությունները հնարավոր չէ:

Հրաժեշտից առաջ թեթեյանցիներին ընդունեց ՀԹՄՄ նախագահ **Ռուբեն Միրզախանյանը:** Պրն Միրզախանյանը մանրամասն տեղեկացրեց, թե միությունում ինչ ծրագրեր են իրականացվում ու նրանց նվիրեց Արա Գեւորգյանի ստեղծագործությունների հավաքածու DVD-ն:

Այդ օրը կրկնակի նվերների արժանացան 6 թեթեյանցիներ, որոնց ծննդյան օրերը համընկել էին այցին: Վառ տպավորություններով թեթեյանցիները հրաժեշտ տվեցին մայր հայրենիքին ու խոստացան մեր մայր հայրենիքը, ուր անդադար վերադառնալու ենք...»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՊՈՏԳԱՍՍԱՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Կաշառք են տալիս, որ կաշառք չվերցնե՞ն...

Ռադիոյից տեղեկացա, որ կոալիցիայի որոշ ներկայացուցիչներ առաջարկում են Ազգային ժողովի պատգամավորների աշխատավարձը կրկնակի բարձրացնել: Մի՞թե գների բարձրացումն ամենից շաս ազդել է նրանց վրա, որ ուզում են, որպեսզի պատգամավորը սանա ամսական 600 հազար դրամ: Աշխատավարձ բարձրացնելը լավ բան է, սակայն դրա հիմնավորումը տարօրինակ էր: Այն բխեցնում են տհմանադրությունից, համեմատում հաղթառայողների մյուս ոլորտների հետ, նաեւ կաշառակերությունից զերծ պահելու նպատակով: Վերջին հիմնավորումը շաս վիրավորական է: Վիրավորական է հենց իրենց՝ իշխանավորների համար: Ահա նա մեկ անհասկանալի հիմնավորում. վերնախավի աշխատավարձը բարձրացնում են, որպեսզի բարձրանա պետության հեղինակությունը: Մինչդեռ պետությանը նպաստող ամենաաճչացող փաստը ժողովրդի աղքատությունն է, աղետի գոտու, լքված գյուղերի թվաքանակը:

Ահա այս եւ այլ խնդիրների լուծումով միայն կարելի է բարձրացնել վարկանիշը եւ վստահությունը հանդեպ Ազգային ժողովի, որին հանրային ռադիոյով հաճախակի են բնորոշում իբրեւ «հայրենի խորհրդարան»:

Եթե աշխատավարձը չբարձրացնեն, ժողովրդի ընտրյալները կարո՞ղ են կաշառք վերցնել: Մի՞թե որոշ գիտաշխատողներ, դասախոսներ, որ ամսական սանում են 30-40 հազար դրամ աշխատավարձ, կարող են կաշառք վերցնել: Մի՞թե պատգամավորների աշխատավարձը վախից են բարձրացնում, թե՞ կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով: Եթե շարունակենք համեմատությունը, մի՞թե պատգամավորի աշխատանքն այնքան ծանր է, որ նա պիտի օրական 20 անգամ ավելի լավ սնվի, քան գիտաշխատողը կամ թոշակառուն՝ 20 բաժակ թեյ ավելի խմի, 20 կտոր շաքար ավելի օգտագործի, 20 անգամ ավելի ճաշ ուտի, շնչի եւ այլն: Ասացվում է, որ պատգամավորներին կաշառում են, որպեսզի նրանք կաշառք չվերցնեն: Մի՞թե նախորդ անգամ էլ նույն նպատակով էին բարձրացրել նրանց աշխատավարձը: Սա հիշեցնում է այն զավեշտը,, երբ մարդկերներին հարցրել են, թե նրանք շարունակո՞ւմ են մարդ ուտել, նրանք զարմացած պատասխանել են. «Ո՛չ, վերջին մարդկերին երեկ կերանք»:

Պարզվում է, որ կաշառակերությունը կարդ չունի աշխատավարձի հետ, այլ մի առաքինություն է, որը չի ծախվում եւ չի գնվում: Ըստ բառարանի, հայերը «կաշառք» բառը փոխառել են ասիերենից: Ուստի կաշառակերությունը բնորոշ չէր հայերին, իսկ այսօր «լայնամասշտաբ» պայքար են ծավալել կաշառակերության դեմ: Եվ նույնիսկ ուրիշ երկրներից փող են ուղարկում, օգնում արդասախիլ անելու մեր կաշառակերությունը...

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

7 ՅՈՒՆԻՍ 2008 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԿԱՅ ԱՇԱԽՈՒՅԺ

Դարբերականությունը՝ երկաբաթյա

Թիվ 8(51)

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

MODERN ART MUSEUM OF ARMENIA

ԿԱՄ ԻԳԻԹՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Ասովետական ռեժիմի օրոք, 1972թ. հունիսի 8-ին, մայրաքաղաքի Մաշտոցի անվան պողոտայի վրա բացվեց մի նոր կերպարվեստի թանգարան: Շնորհիվ երիտասարդ արվեստաբան Հենրիկ Իգիթյանին, որը ավարտել էր Լենինգրադի Իլյա Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայի արվեստաբանության ֆակուլտետը: Հենրիկ Իգիթյանը շատ հրճիռ թափեց այդ թանգարանին հիմնադրման թույլտվությունարտոնությունը ձեռք գցելու համար՝ հաղթահարելով չկամ եւ իր հանդեպ չարացած մարդկանց բարձրացրած արգելքները: Անշուշտ, իրեն զորավիգ էին իր ընկերները եւ մանավանդ նկարիչները, կային նույնիսկ պարտիականներ: Բնական է, կային նաեւ մարդիկ, որոնք տարակուսանքով էին հետեւում Հենրիկին, չէին հավատում: Ինչ մեղմ բացցնեմ, ես էլ անհավատներում խմբից էի, բայց Հենրիկ Իգիթյանը ապացուցեց, որ հավատացողը կարող է լեռներ շուռ տալ: Եվ շուռ տվեց: Այդ թանգարանին ստեղծման մեջ մանավանդ «մեծ ամագ» ունեցավ այդ օրերում Երեւանի սիրված խաղահալուխ Գրիգոր Հասրաթյանը՝ ազատամիտ եւ լայնախոհ ղեկավարական գործիչը եւ պարտիական ղեկավարը: Այստեղ պետք է հիշենք նաեւ նկարիչների դերը այս նոր տեսակի թանգարանի ստեղծման հաջողության մեջ, որոնք՝ հազիվ մի տասնյակ, գիտակցում էին Հենրիկի նպատակին նշանակությունը, բարձր էին գնահատում Հենրիկին՝ իբրեւ մարդ, խաղաքաղաքացի եւ արվեստաբան: Նկարիչները չզլացան՝ իրենց լավագույն գործերը նվիրեցին այս նոր, անծանոթ թանգարանին:

Արդեն 35 տարիներ ի վեր թանգարանը գործում է իբրեւ մայրաքաղաքի նշանավոր մշակույթի օջախներին մեկը, եւ այստեղ ես ասում եմ, հարգելի ընթերցող, որ հնարավոր է տեղյակ չլիներ, բայց լավ կլիներ որ իմանաս, որ նոր թանգարանին մտահղացման եւ ստեղծման պատիվը նախ եւ առաջ պատկանում է Հենրիկ Իգիթյանին: Եվ պատահական չէ, որ այսօր ալ, երբ խոսակցություն է գնում այդ թանգարանի մասին, շատերն ասում են՝ Իգիթյանի թանգարանը, եւ դրան ոչ մեկը չի առարկում: Այս թանգարանի ստեղծմանն օգնել են Հենրիկին: Այդպան:

Թանգարանի ստեղծման առիթով նույնչափ եւ ավելի կարեւոր է այն հարցը եւ պատասխանը, որ տալիս եմ: Իսկ ինչո՞ւ, ինչպե՞ս եղավ, որ այդ տեսակ թանգարանի հիմնման մտահղացումը ունեցավ Հենրիկ Իգիթյանը եւ ոչ ուրիշ արվեստաբան մը: Որպիսեւ 70-ական թվականներում Սովետական Հայաստանում հազվագյուտ եւ իսկական արվեստաբաններից էր Հենրիկ Իգիթյանը: Շատերից մեկ գլուխ բարձր մարդ, որ ուներ հսկայ ծրագիր եւ մտածելակերպ արվեստի մասին: Նա իբրեւ արվեստաբան մտավ հայոց մշակույթի ասպարեզ մի նոր ասպակով՝ որ բարձրաձայն ասի ի լուր աշխարհի, որ ինը ում է հավանում, ում չի հավանում, որ նկարիչի ստեղծագործությունը իրեն դուր է գալիս, որ նկարը դուրը չի գալիս: Մեկ խոսով՝ ում սիրում է, ում չի սիրում ինը, երբ խոսը վերաբերում է արվեստի գործը գնահատելուն: Ոչ մեկի կարծիքը հաշվի չէր առնելու: Ում կարծիքը ուզում է լինի: Նամանավանդ բոլշեւիկներու կարծիքը հաշվի չէր առնելու: Որեւ որ գիտեմ, Հայաստանում մինչեւ Հենրիկ Իգիթյանին հայտնվելը պարտիան էր որոշում. առաջին քարտուղարն էր ասում. կոպտորեն մինիստրը թուրքի պես կրկնում էր այն, ինչ որ անգիր էր արել խաղարարմունքներու ժամանակ. որ ով արվեստագետ է եւ ով ոչ, ով իրավունք ունի ստեղծելու եւ ցուցադրելու, ով՝ ոչ:

Գույները եւ ճաշակը չեն վիճարկվում, ասում են ֆրանսիացիները: Այո, շատ ճիշտ է: Ժողովրդական ասույթ է, դա նշանակում է մի բան՝ որ գույները եւ ճաշակը պետք չէ պարտադրել որեւէ մեկին:

Երբ հիշում եմ 1972 թվականի մասին, Իգիթյանի ստեղծած թանգարանին տարին... Այն ատեն Հայաստանը գտնվում էր սովետական պետության սահմաններում մեջ, իսկ Սովետական Միությունը իրականին մեջ մարդ առարարի կողմե ստեղծած մեծագույն բանտ էր եւ նաեւ ամենամեծ տանջանոցը: Չեմ ուզեր շատ խորանալ եւ տարածվել: Սովետական Միությունում կյանքը, մարդկային հարաբերությունը բնորոշող ճիշտ բառը փնտրելով գտա անհեթեթություն բառը: Հակաբնական եւ հակամարդկային հարաբերություններ... Սերգեյ Փարաջանովը բանտարկվում է, մի կերպ հրաշով բանտից ազատվում է, մահվան ճիրաններից փրկվում: Մարմինը փրկվեց: Բայց ուզում էին հոգին սպանել, այս անգամ էլ թույլ չտալով, որ նկարահանի: Անշուշտ, գիտեինք, որ Սերգեյ Փարաջանովը մեծագույն արվեստագետ է, բայց շնորհիվ մարդասպան բոլշեւիկներում ամբողջ աշխարհը մանավանդ իմացավ, որ Սերգեյ Փարաջանովը նախ եւ առաջ աշխարհի ամենաբարոյական մարդն է, Փարաջանովը սուրբ մըն է: Միթե ամեն տարի հայ ազգը կարող է Մինաս ծնել, որուն նույնիսկ իր կոլեգաները ուզում էին անտեսել: Այսօր մենք 30 տարեկան Մինաս չունենք: Պիտի սպասենք, հավատալով, որ մեր ազգը նորից Մինաս պիտի ծնի:

Երբ գրում եմ այս տողերը, Հենրիկին ես չեմ մոռացել: Արդիլը շատ դժվար պիտի ըլլար Հենրիկ Իգիթյանին համար... Չեմ ուզում Սովետական Միությունը հիշել, բայց որքան մարդիկ կործանվեցին, որքան հարստություններ մսխվեցին, որքան մարդիկ տանջվեցին այդ ռեժիմին տակ: Ինչպե՞ս կարելի էր ստեղծել պետություն, որը հիմնված ըլլար հակառակության վրա, ատելության վրա, թշնամության վրա... Մանկապարտեզից երախաներին սովորեցնում էին, որ Սովետական Միությունն դուրս պարող բոլոր մարդիկ իրենց թշնամիներն էին, լրտեսներ, տեռորիստներ... Էհ, եթե պետությունը չէր վստահում իր իսկ հրաձակներում, էլ ինչ էինք սպասում այդ պետությունից: 20-դ դարում մոլորակի մեկ վեցերորդին վրա իշխում էր հոգեկան խանգարվածներու մի խումբ: Բայց մոլորակի վրա կյանքը շարունակվում էր... Անշուշտ, ոչ ոք կրնար պատկերացնել, որ Սովետական Միությունը պիտի փուլ գա եւ վերածվի ավերակների կույտի, ավելի ճիշտ՝ լեռի, գոր ուր կամ կանուխ հոտոտելու են:

Վերադառնանք արվեստին, թանգարանին, նկարիչին, Իգիթյանին: Անշուշտ, բոլշեւիկներուն արվեստ պետք չէր: Արվեստը բնության կողմից մարդու տրված առաջին հաստկությունն է, որ մարդում տարբերում է անասունից: Արվեստն է միակ ապացույցը, որ մարդը հոգի ունի: Մարդը ուրիշ մարդոց հետ կապված է ոչ թե մարմինով, այլ հոգիով: Մարդը, որ իր զգացումները եւ մտածումները, իր սերը ազատորեն չի կարող արտահայտել,- իրեն խանգարում են,- դադարում է մարդ ըլլալուց: Մարդը, որ կրնա պրիլ առանց հոգիի, նա անասուն կոչվելու անգամ իրավունք չունի: Վերջը, Սովետին պետք չէր հոգի, Սովետին պետք էր մարդկային հոտ, իսկ արվեստագետը մարդկանց հիշեցնում էր՝ իր ստեղծագործություններով, որ իրենք հոգի ունեն: Այդպան: Իսկ Սովետը արվեստագետին մեջ տեսնում էր իր մահացու թշնամին, եւ արվեստագետին ոչնչացնում էր իբրեւ «ժողովրդի թշնամի»: Բոլշեւիկ «արվեստաբանները», տեսաբանները ամենաշատ զզվում էին, ինչպես ասում էին, «իզմերից»: Թանգարաններու այն տահները, որ պահվում էին արեւմտաեվրոպական ժամանակակից եւ մինչեւ 30-ական թվականները Ռուսաստանում ստեղծված գլուխգործոցները, ժողովուրդի համար փակի տակ էին: Բայց պարտիական արվեստաբանները անդադար հայհոյում էին այդ նկարչությունից ծնված նկարչական պայմանական անուններին՝ «իզմերին»՝ իմպրեսիոնիզմ, կուբիզմ, սյուռռեալիզմ եւ այլն, եւ որպեսզի վերջնականապես շարից դուրս բերեն նկարիչներուն, հրեշավոր գաղափար ունեցան «ստեղծել» իզմ մը, որը սովետական էր, ուրեմն միակ ճշմարիտը: Ահա, որով զինված սովետական արվեստագետները պայքարելու էին կեղծ եւ թշնամական իզմերի դեմ: Սովետական արվեստին պետք էր մեկ իզմ, եւ բոլշեւիկ «իդեոլոգները», «մտավորականները» հորինեցին ամենահրեշավոր անհեթեթությունը՝ սոցռեալիզմ կոչվող իզմը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանանված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր սեանագրից 30 ոչոնի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հեռագրա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ ավելի մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հանանված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր սեանագրից 30 ոչոնի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, արդա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ սառուցվում է՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակիցին, մուտքած նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո երեքշաբթի ժամանակ:

Ավտոմեքենաները գտնվում են Բ.Բրեանի, Քանաքեռ հեռ. 3-ոլ վող., s.10 հասցեում: Ավտոմեքենային ծանոթանալու համար զանգահարել՝ 53-96-33 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, գրանցվելու դեպքում հեռախոսային եղանակով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Բ.Բրեանի, Դ.Անհաղթ Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովի՝ հեռախոս՝ 23-73-00, էլեկտրոնային՝ URL: //www.privatization.am:

Գնահատող փոփոխությունների ու լրացումները վերադարձվեն այն ձեռով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակման ենթադրությամբ:

ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
մրցույթի անցկացման մասին
(ծանկագիր՝ 177-Ն)

Ի կատարումն ՀՀ կառավարության 2008թ-ի մեկնարկի 23-ի թիվ 177-Ն որոշման՝ ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնակիցներին բոլոր տարածքներին մասնակցելու «Կոլեկտիվ» ՊԲԿԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին (ծանկագիր՝ 177-Ն):

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Գործարքի տեսակը	Բաժնետոմսերի մասնավորեցում
1.2	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N177-Ն, 23.02.2008թ.
1.3	Ընկերության սեփական կապիտալի ընդհանուր մնացորդը (դրամ)	4310,4
1.4	Պարտքերի ընդհանուր հոդվածի չափը (հազ. դրամ)	6,295
1.5	Տեղեկություններ անշարժ գույքի կամ սեփականության իրավունքների ոչնչացման մասին	Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի դադարման վկայագրեր՝ N 0223716, 19.10.1990թ., N 2165311, 16.03.2007թ., N 2165310, 09.03.2007թ., N 2165309, 09.03.2007թ., N 1385246, 16.04.2004թ.
1.6	Գործունեության հիմնական տեսակը	Երկաթուղային տրանսպորտ
1.7	Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը (հազ. դրամ)	21 890
1.8	Ազատ բաժնետոմսերը (տոկոս)	100
1.9	Մասնավորեցման ենթակա բաժնետոմսերի ենթադրյալ գինը (հազ.դրամ)	21 890

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.01.2007թ. դրությամբ)

(հազ.դրամ)

Գ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	995*	27131.1
2.1.1	Գործնական նշանակության անշարժ գույքի, այդ թվում՝	826.6	10090.5
*	գրասենյակներ եւ արտադրամասեր /87 հա/	368.100	
	բնակարանային նշանակության /12 հա/	101.700	
	առեւտրային, սննդամատակարարման գույք, գործիք եւ այլ /105 հա/	356.8	
2.1.2	Անշարժ գույք, այդ թվում	168.400	17040.6
*	գետի-ջերմուկներ /3 հա/	3.400	
*	կառուցվածքներ եւ փոխանցող հարմարանքներ /21 հա/	165.000	
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2	Ընթացիկ ակտիվներ	157459.5	157459.5
2.3	Պարտավորություններ /ոչ ընթացիկ եւ ընթացիկ, այդ թվում՝	162701	162701
2.3.1	Ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	-	-
2.3.2.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	162701	162701
*	ՀՀ բյուջեի նկատմամբ	1136.8	1136.8
*	կարճաժամկետ բանկային փոխառություններ	130520.4	130520.4
*	կոնտրակտային պարտեր գնումների գծով	15744.9	15744.9
*	պարտատոմսերի եւ արժեթղթերի գծով	1925.2	1925.2
*	պարտավորություններ անմնացորդային արժեքների վարձակալության գծով	8858.3	8858.3
*	այլ կոնտրակտային պարտեր	4515.3	4515.3

* Ներառված են հիմնական միջոցների մնացորդային արժեքները

2.4. Համաձայն ՀՀ կառավարության 23.02.2008թ. N177-Ն որոշման, Ընկերությունը 1999-2006 թվականների հեռանկարային արդյունքների վերաբերյալ ենթակա ստանդարտների գծով պարտավորություններ չունի:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնակիցները այն տարբերակներ (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 6.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են դիմում (ծանկագիր՝ 177-Ն), որը նիստում է հեռարձակ փաստաթղթերը՝

- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), հարկատուների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը,
- հայտատուի կողմից ստված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- գրավոնար մուտքի (առավելագույն 3 ամիսների կտրվածքով),
- իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հայտատուն առ այն, որ հայտատուի հիմնադիրներով կամ դիմորդ ընկերությունում ոչնչով գրավոր ոչնչով ունեցող դիրքերի համար պետական հանձնաժողովի կամ նրանց ներկայացուցիչներ չեն պատկանում, կամ պատկանող հանձնաժողովները տարված են՝ կցելով այդ հանձնաժողովները:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն՝ մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ 3-ոլ կետում նշված փաստաթղթով, ներկայացվում են սոսնձված եւ սառուցված ծրարով՝ անվանը կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի հասանելի հասցեատերերի կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն մուտքագրելու օրը:

4.2. 4.1. կետի կիսամյակային հայտերն առանց ծրարի բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «Փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն հետաքննման:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցույթին մասնակցելու համար ներկայացված առաջարկները պետք է առաջնայնորեն ընտրեն թղթերի ցուցակներում եւ վերջ չդնեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տոպրակի կամ ոչոչ ընթացքների ձեռագրով:

Մրցույթին առաջարկները ներկայացվում են հարեւն (եզրով), իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Հարգանքությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կարգանվելու հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցույթին հանձնաժողովի՝ նշելով մասնակիցների անվանումը եւ մրցույթի ծանկագիրը (ծանկագիր՝ 177-Ն):

4.7. Մրցույթին առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կարով: Սակայն փաստաթղթերը ՀՀ կառավարության առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ մոտացվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը դրանցում է հատուկ դրանքանալնում՝ հայտատուն ապրել սաղարկան մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող մասնակցի նախավճարն ընդունվում է մասնակցի կողմից առաջարկված գույքի մասնավորեցման (տեսակ) գնի մեջ: Մրցույթում հաղթող մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների ամփոփումը կատարելու, հետագա վճարումները կատարելու եւ (կամ) պայմանագիր կնքելու դեպքում նախավճարը չի վերադարձվում եւ մասնավորեցումը (տեսակը) հաստատվում է կատարած:

Մրցույթում հաղթող մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն:

Հայտային վարձավճարի ընդհանուր մասնակցությունը հանդիսանում է հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից հանձնաժողովին դիմում վերադարձելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հանձնվում է հայտատուի հաշվարկային գրքույկի հանձնման (հայտ) չակով:

4.11. Մրցույթի պահանջներին մրցույթին առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցույթին առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցույթին առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

4.12. Մրցույթի հաղորդի որոշման համար առաջարկվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը (նվազագույն գինը՝ 21 890 հազ. դրամ),
ներդրումների չափը՝ առաջիկա 3 ամիսների կտրվածքով,
սոցիալական երաշխիքներ, այդ թվում՝ ուժեղացված հերթի եւ միջին ուժեղացվածի վերաբերյալ:

4.13. Մրցույթի հաղորդ է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկն առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմանները:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1. Մրցույթի հաղորդը 10-օրյա ժամկետում սկսում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի նիստ մասնակիցները կարող են սեանալ արձանագրության պատճենները:

5.2. Մրցույթի հաղորդը ոչ առևտրային սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի գինը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը սեանալու օրվանից մեկնարկա ժամկետում՝ հայտատուի հարմարության արդյունքում՝ բաժնետոմսերի վաճառի գնի 70%-ն ուղղելով ՀՀ ոչ առևտրային գույքի, իսկ 30%-ը՝ հանձնաժողովի հանձնի ֆոնդային գույքի՝ բոլոր գույքի գնումներ վարի:

5.3. Համաձայն ՀՀ կառավարության 23.02.2008թ. N177-Ն որոշման 14-ոլ կետի՝ մրցույթի հաղորդի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկնարկա ժամկետում ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչությունը գնորդ հետ կնքվի մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 1 569 642 դրամ (նոտարական արձանագրված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքը՝ հայտատուի հարմարության տեսակետից սահմանված կարգով:

5.4. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդ հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքներ եւ պարտավորությունների իրավահաջորդ:

5.5. Սահմանված ժամկետում վճարումը կկատարելու դեպքում մրցույթի հաղորդի գնված նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը հանվում է կկայացած:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	1284500 դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտքագրման հատուկ հաշիվը	Գնով 1 տեղական գանձարանական բաժանմունք դրամային - 900013145017
6.3	Մրցույթին առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2008 թվականի հունիսի 22, ժամը 13.00
6.4	Մրցույթի առաջարկի ներկայացման վայրը	Բ.Բրեանի, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն,438 սենյակ
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2008 թվականի հունիսի 25-ը, ժամը 15.00 Բ.Բրեանի, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն
6.6	Հեռախոսային կապ	(37410) 581441
6.7	Էլեկտրոնային հասցե	URL : //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն՝ 581441 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությունն առընթեր ոչ առևտրային գույքի կառավարման վարչություն

Թեքնոյի հերշնչանքը

պետք չէ մոռանալ նաեւ, որ այս բառով շատերը բնորոշում են այն ամենը, ինչ նման է հասույթ եւ թեքնոյի, այսինքն ոիթմիկ եւ դինամիկ էլեկտրոնային երաժշտություն, որի շեշտը դրված է բաս-հարվածի վրա՝ Rave, Trance, Jungle, Drum n Bass, Hardcore: Երեւի դրա պատճառն այն է, որ Techno-ն ամբողջությամբ էլեկտրոնային առաջին երաժշտական ոճն էր:

Եվ այսպիսով՝ 1988-ին բրիտանական երաժշտական խանութներում հայտնվեց մի ձայնասկավառակ, որի շապիկին կարելի էր կարդալ հետեւյալը. «Techno! The new dance sound of Detroit»:

Սթյուարտ Քոսգրուվին եւ Ջոն Մակկորդիին «The Face» եւ «NME» ամսագրերից հարցազրույց անցկացրին թեքնոյի կնճահայրերի հետ: Այս հարցազրույցի ժամանակ Դերիք Մեյը Քոսգրուվին ասաց իր պատմական նախադասությունը. «Թեքնոն նույն է, ինչ Դետրոյթը. մի մեծ թյուրիմացություն, ինչպիսին կլիներ, օրինակ, եթե Kraftwerk-ը եւ Ջորջ Քլինթոնը մնային մի վերելակի մեջ, եւ նրանցից որեւէ մեկի մոտ լիներ սեկվենսոր»: Ջեզանից շատերը հիմա երեւի կմտածեն, որ Մեյը հիմարություն է ասել, կամ էլ ոչ մի իմաստ չկա նրա խոսքերի մեջ, սակայն դրանց իմաստը ավելի խորն է: Այն թաքնված է ոչ թե երաժշտության հնչյունների, այլ նրա գաղափարախոսության եւ հոգեբանության մեջ: Մեյի նախադասությունը փիլիսոփայություն է, որը նման է մի ոչինչ չասող աբսուրդի: Բայց այդ աբսուրդը հետագայում հուզել է թեքնոյի միլիոնավոր երկրպագուների:

Իսկ ահա խուանը հարցազրույցի ժամանակ ասաց. «Բերի Գորդին (նշենք, որ նա 1959-ին հիմնեց «Motown» ձայնագրման ստուդիան եւ աշխարհին տվեց հանրահայտ Soul երգիչներ) հիմնեց իր «Motown» լեյբլը այն նույն սկզբունքով, որով եւ «Ֆորդը» իր արտադրական ձեռնարկությունները: Այսօր այդ ձեռնարկությունները չեն աշխատում այդ սկզբունքներով. նրանք մեքենա պատրաստելիս օգտագործում են ռոբոտներ եւ կոմպյուտերներ: Եվ ինձ ավելի շատ հետաքրքրում են այդ ռոբոտները, քան Գորդիի երաժշտությունը»: Սա նույնքան աբսուրդ է, քանի որ յուրաքանչյուր դետրոյթցի կարող է միայն հոյարտանալ «Motown»-ով:

Էլթոն Միլլերի եւ Ջորջ Բայերի «Music institute» ալբոմում նվագում էին Derrick May-ը, Darrel D Wynn-ն եւ Chez Damier-ը, եւ այս ալբոմը յուրատեսակ դրոշմ դարձավ հետագա թեքնո ասպեկտի համար, սակայն պետք է ասել նաեւ, որ թեքնոն պատմության մեջ միակ երաժշտական ուղղությունն է, որի խմբերի մեծամասնության անդամները անհայտ էին մնում: Եվրոպայում ասպիճանաբար սկսում էին փրել նոր ոճը. հասույթ հետ մեկտեղ դիջեյները սկսեցին հաճախակի նվագել թեքնո, եւ այն փասը, որ իրենց երաժշտությունը կարող է երիտասարդ տղաներ եւ աղջիկներ մի քանի հազարանոց բաների եւ աղջիկների մի քանի հազարանոց բանակ հավաքել, աղջահար էր թողնում թե խուանին, թե Մեյին եւ թե Սաունդերսոնին:

Այս ամենով հանդերձ՝ շատերը թեքնո ասելիս հասկանում են ոչ թե այս երաժշտությունը, այլ մեկ ուրիշ անուն, անուն, որը երաժշտությամբ արտահայտեց մարդկային ցավը, անուն, որը երաժշտությունը վերածեց հզոր գաղափարախոսական զենքի, որը չուզեցավ հաշտվել ոչ մի օրենքի հետ, անուն, որը թեքնոյի յուրահատուկ երկրպագու արտասանում է գլուխը բարձր եւ հոյարտորեն. «Underground Resistance» («Ընդհատակյա դիմադրություն»): Հասկանալու համար, թե ինչի դեմ էին նրանք պայքարում, պետք է հասկանալ, թե ովքեր հիմնեցին խումբը. «Underground Resistance» ասելով շատերը հասկանում են թե ձայնագրման ստուդիա, թե երաժիշտների մի ողջ բանակ:

Կախարդը

Խուանի նման մի երիտասարդ էլ բնակվում էր Դետրոյթում. նրա անունը Jeff Mills էր: Նրա մեծ եղբայրը դիջեյ էր, եւ երբ վերջինս թողեց դիջեյինգը, Ջեֆը ժառանգեց նրա տեխնիկան ու սկսեց ինքնուրույն ուսումնասիրել միքսի արվեստը: Երբ Ջեֆը 16 տարեկան էր, արդեն նվագում էր տարատեսակ պատանեկան դիսկոտեկներում, սակայն ձգտում էր իրական դիջեյինգին, որը կարող էր լինել միայն գիշերային ակումբում: Իսկ այն ժամանակ անչափահասներին թույլ չէին տալիս մտնել այդպիսի վայրեր: Բայց եղբոր կարերի շնորհիվ Միլզը հնարավորություն ստացավ իր ունակությունները ցույց տալ մի ակումբի մենեջերներին եւ դիջեյներին: «Lady Club». այդպես էր կոչվում այն ակումբը, որտեղ առաջին անգամ նվագեց Ջեֆ Միլզը: Նրան խնդրեցին, որ նա սկսի սեթը եւ ցույց տա իր հմտությունը: Ջեֆը մի նվագարկչին դրեց թրեքը սկզբից, իսկ մյուսին՝ բրեյքից: Այս վիրտուոզ քայլը զարմացրեց թե մենեջերներին եւ թե դիջեյներին, որոնք սկսեցին ուսուցանել երիտասարդ տաղանդին:

Մի գեղեցիկ օր «Lady Club»-ում պետք է այցելեր աշխարհահռչակ երգիչ Prince-ը, եւ դիջեյի դերը այդ օրը հանձնվեց Միլզին: «WDRQ» ռադիոկայանը ուղիղ հեռարձակմամբ հաղորդում էր ակումբից, ու հաղորդավարուհին, մոտենալով դիջեյին, խնդրեց, որ նա ասի իր կեղծանունը: Սակայն նա չուներ կեղծանուն (դիջեյներն այն ժամանակ կեղծանուն չէին ընտրում) եւ այստեղ ոյաասխանեց. «Ընկերս ինձ «Wizard» («կախարդ») է անվանում», եւ հաղորդավարուհին առագորեն ասաց. «Մենք զգնվում ենք «Lady Club» ակումբում, եւ ձեզ համար այժմ կնվագի «Wizard»-ը»: Այս միստիկ անվանումը հետագայում շատ խոր հետք թողեց հատկապես Hip-Hop-ի երկրպագուների սրտերում:

Շուտով Ջեֆին հրավիրում են «WDRQ» ռադիոկայան եւ առաջարկում դառնալ ռադիոդիջեյ, քանի որ ռադիոկայանին պետք էին նոր մոտեցումներ ու թարմ մտքեր: Ջեֆը այս ամենի հետ մեկտեղ ստեղծագործում էր. նա ուներ խումբ, որը կոչվում էր «The Final Cut»: Նրանք ստեղծագործում էին մոալ եւ արդկոռ Industrial ոճով: Դե իհարկե, սեւամորթ տղայի Industrial նվագելը սենսացիոն իրադարձություն էր, բայց նրան չէր լռում այն զգացումը, որ իրեն խմբում չեն հասկանում: Ջեֆը մեծ սեր ուներ նաեւ ռեգի նկատմամբ, եւ հենց նրա ջութեռով շատ դետրոյթցի երիտասարդներ, մոռանալով թմբուկները, սկսեցին զբաղվել Hip-Hop-ով: Հետագայում նրա երեկույթներին սկսեցին հաճախել շատ հայտնի ռեփերներ, օրինակ՝ Eminem-ը: Միլզը այն եզակի դիջեյներից էր, ով ընկալում էր ռեգի խորաթափանցությունը եւ այդ երաժշտությունը չէր համարում անմիտ արտասանություն:

Դայֆարի ասպետները

Եթե Դետրոյթում կար մի մարդ, որ զգացել էր այդ խաղի ցավն ու տառապանքը, ապա դա Մայլ Բենֆսն էր կամ, ինչպես հաճախ էին անվանում նրան, խելագար Մայլը: Նա էլ էր սիրահարված երաժշտությանը, մասնավորապես՝ մոթոունյան սոուլին, որը մի ժամանակ լավատեսություն առթացրեց դետրոյթցիների մեջ: Սակայն լինելով սեւամորթ՝ նա սխրված էր որոշ ժամանակ հրաժարվել իր երազանքներից, քանի որ ԱՄՆ-ում սեւամորթ երաժիշտները ավելի շատ «կարիկատուր» էին անում: Պրոդյուսերները մի քանի այլ սեւամորթ տղաների հետ Մայլին ընդգրկեցին մի անհետաքրքիր խմբի մեջ, որը ուներ անհեթեթ անվանում՝ «For Girls Only» («Միայն աղջիկների համար»), եւ որին սիրում էին երգել անհեթեթ երգեր: Մայլը ծնվել էր ծայրաստիճան աղքատ ընտանիքում եւ ցանկանում էր երաժշտությամբ զբաղվել ազատվելու նպատակով: Նա երազում էր, որ իր մասին գրեն ամսագրերում, իր նկարները հայտնվեն թերթերի առաջին էջերում, իր տեսահոլովակները ցուցադրվեն հեռուստատեսությամբ, սակայն այդ ամենին հասնելու համար ստիպված էր իրեն ծաղրածուի պես պահել: Բայց ամեն ինչ ակնթարթորեն փոխվեց, երբ նա լսեց «Public Enemy»-ի ռեփը, որ հակադրվել էր ամբողջ աշխարհին: Շուտով Մայլը թողեց իր անհեթեթ խումբը, այդպես վարվեց նաեւ Միլզը, եւ նրանք հանդիպեցին: Եթե այս աշխարհում կա երկու երաժիշտ, որոնք իրար հասկանում են կես բառից, ապա դա Միլզն ու Մայլն են: Նրանք երկուսն էլ սիրում էին «Public Enemy», երկուսն էլ երաժշտության մեջ էին տեսնում իրենց հայրենի քաղաքի առագան: 1991-ին Ջեֆ Միլզը եւ Մայլ Բենֆսը հիմնեցին «Underground Resistance» խումբը:

Նրանք արդեն հասկացել էին, որ թեքնոն ներում ունեցող երաժշտություն է եւ սկսեցին ստեղծագործել հենց այդ ոճով: Պետք է ասել, որ Միլզի հեռացավ ռադիոթթերից եւ հասկացավ, որ իրեն շահագործել են որպես նոր աստղ, սակայն որոշեց յուրատեսակ վրեժ լուծել: Նա ուղղակի թթում հնչեցրեց «Public Enemy»-ի երգերից մեկը, ինչի համար նրան խիստ նկատողություն արեցին, սակայն դա կրկնվեց, եւ նրա ռադիոհաղորդման տեւողությունը կրճատեցին: Միլզը այնքան միացրեց «Public Enemy», մինչեւ նրա հաղորդումը դարձրեցին 10 րոպե, եւ այդ ժամանակ նա ինքը որոշեց հեռանալ Ռադիո «WDRQ»-ից: Ու «Wizard»-ը մահացավ, մահացավ նրա կերպարը, սակայն մարդը, որը թաքնվում էր այդ անվան տակ, երկար ժամանակ շարունակեց ստեղծագործել նոր ոգով: Շատ երաժշտագետների կարծիքով նա գրեց բոլոր ժամանակների լավագույն թեքնոն: Ստեղծագործությունը կոչվում էր «The Bells», որը ի ցույց էր հանում Դետրոյթի ցավն ու տառապանքը եւ միաժամանակ կոչ անում պայքարել եւ չհանձնվել: «Underground Resistance»-ը բարձրաձայնեց այն նույն խնդիրները, ինչը եւ «Public Enemy»-ն: Նրանք սկսեցին երաժշտության շնորհիվ պայքարել եւ չհանձնվել: Խմբի առաջին ձայնագրությունը լույս տեսավ 1991-ին եւ կոչվեց «Your Time Is Up»՝ «Քո ժամանակը սպառվեց»:

Նրանց երաժշտությունը շատ ավելի մռայլ էր եւ շատ ավելի ագրեսիվ, քան մինչ այդ ստեղծված Techno-ները, եւ այդ երաժշտությունն էլ դարձավ իրական Detroit Techno-ն: Այս մռայլ հնչյունների մեջ, սակայն, կարելի էր լսել սոուլի տարր, ինչը շատերի համար մնում է անհասկանալի, քանի որ թեքնո լսելիս նրանց աչքի առջեւ հառնում է բետոնե մի պատ, որի վրա ամրացված են մեծաղույա տարբեր իրեր: Իրականում թեքնոն հենց այդ պատն է, սակայն նրա մեջտեղում կան ծաղիկներ, որոնք տեսնելու համար պետք է հասկանալ այս ոճի հոգեբանությունը: Եթե սկզբում խուանի եւ Մեյի փիլիսոփայությունը ուղղակի աղջեցնում էր երաժշտասերներին, ապա հետագա սերունդներին ընդհանրապես չհուզեց, թե ինչու ստեղծվեց թեքնոն, նրանք ուղղակի լսում էին եւ վերջ: 1994-ին Նյու Յորքում տեղի ունեցավ «New Music Seminar» փառատոնը, որտեղ վերջապես անդրադարձան նաեւ թեքնոյին: Ժուռնալիստների անհիմաս հարցերին խուանը զայրացած պատասխանեց. «Դու չես հասկանում, թե ինչ է թեքնոն: Հիմար-հիմար հարցեր տալու փոխարեն ավելի լավ է գնաս Դետրոյթ եւ տեսնես, թե ինչ է այնտեղ կատարվում»:

«Մենք երբեք չենք մահանա»

Թեքնոն Դետրոյթի համար ավելին էր, քան երաժշտական ուղղություն. խաղարկում տիրող աղետությունը ստիպեց մարդկանց ստեղծել մի բան, որի շնորհիվ նրանք կկարողանային աշխարհին ցույց տալ իրենց ցավը, սակայն այդ ցավի հետ մեկտեղ կկարողանային հայտնել հույս, որ այդ երաժշտությունը կազատի իրենց տանջալից կյանքից:

Քանի-քանի անգամ եկել եւ ասել են Մայլ Բենֆսին . «Ես լսել եմ, որ երաժշտության համար փող են տալիս, լսիր, ես մի բան եմ ստեղծել, գուցե լավը լինի»: Եվ այդ երաժշտությունը իրոք լավն էր, քանի որ դրա մեջ կար հույս, իսկ երբ եկողները մեծ գումարներ առաջարկեցին դեթրոյցի դիջեյներին, նրանք գլուխները կորցրեցին եւ սկսեցին ստեղծել աննորակ եւ անկենդան երաժշտություն: Նրանցից շատերին չի կարելի մեղադրել, քանի որ նրանց ամբողջ կյանքը անցել է հետախուզերում, ու դա նրանք դիտում էին որպես ճակատագրի ընձեռած հնարավորություն: Սակայն ոմանք որոշեցին չլքել իրենց հաղթը փողի եւ փառքի համար: ՍԲ-ը հիմնեց իր սեփական լեյբլը՝ «Submerge»-ը եւ դրա շնորհիվ շատ երիտասարդների փորձեց հետ պահել հանցագործ աշխարհից՝ հասկացնելով, որ կա մի երաժշտություն, որը կարող է նրանց տալ լավ ապագայի հնարավորություն: Ու շատերը հավատացին նրանց, հավատացին, քանի որ այլ ելք չկար. նրանք միասին ստեղծեցին մի մեծ ընտանիք, որում չկար անտարբերություն, բոլորը հավասար էին: Հավատացին նաեւ այն պատճառով, որ «Underground Resistance»-ի երաժշտությունը հզոր էր եւ կարող էր ուժ հաղորդել, իսկ թե ինչպանով էր այն հզոր՝ կիսոզվեմ ինքներդ՝ ծանոթանալով այս պատմությանը:

ՍԲ-ի անդամներից էր Ronaldo-ն, որին գիտեին նաեւ որպես «The Aztec Mystic»: Մի գեղեցիկ օր Ռոնալդոն եւ Մայլը նստած էին մեքսիկական սրճարանում, որի պատերին պատկերված էին աստվածների ու հնների դարաշրջանի տարբեր նկարներ: Ու նրանք հանկարծ սկսում են մտորել ինքների եւ ացտեկների երաժշտության մասին: Քննարկումներից ծնվեց մի երգ, որը ձայնագրեց Ռոնալդոն եւ անվանեց «Jaguar»: Այն միանգամից դարձավ հիթ, եւ նշենք նաեւ, որ այս թթեղը վերջին դասական թեքնոն էր:

«Յագուարի» հայտնի դառնալուց հետո Մայլի հետ կարդ հասատեցին «Sony» ընկերության աշխատակիցները եւ խնդրեցին համաձայնություն, որ իրենք թողարկեն այս երգի կավեր տարբերակը, ինչը Մայլը միանգամից մերժեց: Սակայն «Sony»-ն թողարկեց «Յագուարը», առանց հաշվի առնելու հետագա հետեւանքները: Շուտով Բենֆսը սկսում է տարօրինակ նամակներ ստանալ բազմաթիվ մեծրիմ մարդկանցից, որոնցում ասվում էր, որ նա ծափլեց եւ դավաճանեց բոլորին: Սկզբում Մայլը չէր հասկանում, թե ինչ է կատարվում, բայց երբ իմացավ, որ «Sony»-ն թողարկել է «Յագուարը», ամեն ինչ տեղն ընկավ: ՍԲ-ը պատեհազմ հայտարարեց «Sony» ընկերությանը: Երկրպագուների մի ողջ բանակ սկսեց անընդմեջ նամակներ ուղարկել այդ ընկերության էլեկտրոնային հասցեին, եւ վերջապես նրանք հանձնվեցին ու Մայլին առաջարկեցին շահույթի մի մասը, սակայն նա կտրականապես հրաժարվեց դրանից եւ պահանջեց, որ «Յագուարը» հանվի վաճառքից: Մի առիթով Բենֆսը ասել է. «Այն, ինչ արեց «Sony» ընկերությունը, նման է հրեշտակի վրա ծիծաղելուն: «Յագուարը» խոր հոգի եւ իմաստ ունեցող թթեղ էր, իսկ նրանց համար դա հերթական փուլ հիթն էր, եւ որքո ոչինչ»: Այդ դեպքից հետո ՍԲ-ը թողարկեց «The Revange of The Jaguar» ձայնասկավառակը, որի շապիկին գրվեց. «Էլեկտրոնիկան կոչնչացնի ձեր ախտավոր համակարգը եւ կվերացնի այն երկի երեսից»:

Շատ դիջեյներ այսօր թեքնոն մահացած եւ հին ոճ են համարում եւ ասիճանաբար նվազում են այն մարդիկ, որոնք ստեղծագործում են այս ոճով: Թեքնոն չի կարելի ուղղակի նստել եւ գրել, այն ծնվում է խոր մտից եւ զգացմունքից, եւ երբ երաժիշտը փորձում է այն գրել առանց հոգու, այդ երաժշտությունն այլեւս թեքնո անվանել չի կարելի: Այս ոճը շատ մարդկանց տվեց հույս, որ դրա շնորհիվ հնարավոր կլինի պայքարել անարդարության դեմ, եւ հենց մռայլ հնչողությունը եւ արդունը դարձան այդ պայքարի ուժը, սակայն դա հասկանալու համար պետք է հասկանալ, թե ինչ է Դետրոյթը, ինչու է այդ խաղարկը կանը այդպես դաժան: «Underground Resistance»-ը մի անգամ ասել է «Մենք ստեղծեցինք ապագան եւ բնակվեցինք In երեւակայության մեջ. մենք երբեք չենք մահանա»: Եվ իրոք, մի բան, որը ծնվել է մարդու եւ խոր զգացմունքներից եւ լի է նրանց երազանքով, չի կարող ուղղակի հենց այնպես մահանալ, չի կարող մոռացվել, քանի որ աշխարհում դեռ կան մարդիկ, որոնք հասկանում են, թե ինչու է թեքնոն մռայլ եւ «անմարդկային», չի կարող մահանալ, քանի որ դեռ չեն դադարում հնչել Միլզի դրոնանջները: ■

Լրացել է սամբուլահայ ժամանակակից մտավորական, գրական-մշակութային կյանքում իր հաստատուն տեղն ու դերն ունեցող, հմուտ բանասեր, բառարանագիր, հանրագիտակ Բարսեղ Թուղլաճյանի ծննդյան 75-ամյակը: Նա մեկն է սփյուռքահայ այն գիտնականներից, որը համարձակորեն վեր է հանել հայերի ունեցած դերը Օսմանյան ոլորտության հասարակական-հաղորդական, գրական-մշակութային կյանքի զարգացման գործում դարեր ի վեր: Տարբեր առիթներով անդադարաձալով հայազգի գործիչների կատարած ծառայությանը՝ նա մոռացությունից հանել եւ արժանի գնահատական է տվել նրանց: Ճիշտ է, այդ համարձակությունը երբեմն էժան չի նստել նրա վրա, բայց հայրենասեր գիտնականը կարողացել է դիմակայել եւ հաղթահարել ամեն տեսակի խոչընդոտներն ու դժվարությունները:

ԲԱՆԱՍԻՐԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Երախտաշատ բանասեր
Բարսեղ Թուղլաճյանը

Գրելով Օսմանյան տերության տարբեր շրջանների պատմության առանձին հարցերի մասին՝ Թուղլաճյանն առիթն ու հնարավորություններն օգտագործել է ընդգծելու հայերի բերած նպաստը Թուրքիայի զարգացման ճանապարհին, որ եթե առանձին գիրք գրեր նրանց մասին, հազիվ թե տպագրության բախտի արժանանար, իսկ եթե նույնիսկ հրատարակվեր որեւէ կերպ, անշուշտ, հալածանքի կենթարկվեր: Թուղլաճյանը դիվանագիտորեն է լուծել իր առջեւ դնած հարցերը եւ վեր հանել շատ դեմքերի ու նրանց կյանքի պատմությունը:

Բարսեղ Միհայելի Թուղլաճյանը ծնվել է 1933-ի ապրիլի 1-ին, Սամբուլում, մտավորականի ընտանիքում, ինչը եւ կողմնորոշել է նրա կյանքի հետագա ընթացքը: Թուղլաճյանն սկզբնական կրթությունը ստացել է Սամբուլում: Սովորել եւ 1951-ին ավարտել է Կիրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը: Գիտելիքներն ավելի խորացնելու համար մեկնել է Ամերիկա, 1955-ին ավարտել Միչիգանի համալսարանի լեզվաբանության ֆակուլտետը: Վերադառնալով ծննդավայր՝ նա որոշ տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով Սամբուլի թե Կեդրոնական վարժարանում, եւ թե թուրք-ֆրանսիական վարժարաններում, դասավանդել է անգլերեն եւ ֆրանսերեն: Լեզուների իմացությունը Թուղլաճյանին հնարավորություն է տվել զբաղվել երկու եռալեզու բառարաններ կազմելու եւ հրատարակելու գործով: Աշխատանքային այդ փորձը նպաստել է պատրաստելու «Օվկիանոս» թուրքերեն հանրագիտարանը: Թուրքական մամուլում եւ գրականության մեջ Թուղլաճյանը տպագրվել է Փարս Թուղլաչի գրական անունով:

Թուղլաճյանի պատմաբանասիրական հետաքրքրությունների մեջ կարեւոր տեղ է գրավում «Օսմանյան ճարտարապետության արեւմտականացման ժամանակաշրջանն ու Պալյան ընտանիքը» (1982) ծավալուն աշխատությունը, որտեղ նա վեր է հանել ճարտարապետների մեծ ու հռչակված Պալյան գերդաստանի մի խումբի սերնդի պատմությունը Օսմանյան կայսրության ճարտարապետական արվեստի զարգացման պատմության մեջ: Պալյանները (Գրիգոր, Կարապետ, Հակոբ եւ ուրիշներ) երբեմն-երբեմն սերունդ իրենց կառուցած պալատական, առեւտրական եւ այլ շինություններով զարդարել են Կոստանդնուպոլիսն ու նրա արվարձանները:

«Արեւմտահայերը պատմության ընթացքում» (թուրքերեն)

«Օսմանյան ճարտարապետության արեւմտականացման ժամանակաշրջանն ու Բալյան ընտանիքը» (թուրքերեն)



«Դադյան ընտանիքի դերը օսմանյան սոցիալական, տնտեսական եւ քաղաքական կյանքում» (անգլերեն)

«Գեւորգ Աբդուլլահ. «Կարմիր կայզր» (թուրքերեն)

Այս առնչությամբ է, որ օգտագործելով առիթը, Թուղլաճյանը լուսաբանել է նաեւ Պալյանների բերած նպաստը ազգային հաստատություններին (դպրոց, եկեղեցի, հիվանդանոց եւ այլն), ինչպես կառուցողական, այնպես էլ նյութական ու բարոյական օժանդակության հարցերում:

Թուղլաճյանի աշխատությունների մեջ հայկական իրականությանը վերաբերող գործերից մեկն էլ «Այվազովսկին Թուրքիայում» (1983) գիրքն է, նույնպես թուրքերեն: Հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու՝ Պոլիս այցելելու, ցուցահանդես բացելու մասին մեր տվյալները հայկական մամուլի տվյալներն են եղել: Թուղլաճյանն ավելի է ընդլայնել այդ պատմությունը:

Թուղլաճյանն իր գիրք-նկարագրի ալբոմը կառուցել է ութ բաժիններով՝ առաջաբան, մատենագիտություն, Այվազովսկու կենսագրություն, նրա ապրած տարիներին Սամբուլում տիրող գեղանկարչական կյանքի, Այվազովսկու՝ Պոլսում կազմակերպած ցուցահանդեսների նկարագրություն, Թուրքիայի թանգարաններում եւ մասնավոր անձանց մոտ գտնվելու՝ Այվազովսկու նկարների ցանկը եւ այլն:

Հեղինակն այստեղ եւս հարմար է գտել՝ Այվազովսկու ապրած տարիներին Սամբուլում տիրող գեղանկարչական կյանքի բաժնում հիշատակել ու խոսել հայ նկարիչների՝ Ռուբեն Մանասի, փորագրիչ Անդրանիկ Ֆենեյանի, Տելեմակ Էմերճյանի, Գրիգոր Կեչեջոլուի, Պետրոս Սրապյանի, Սոփոն Պեզիրճյանի (պոլսահայ նշանավոր դերասանուհի Արուսյակ Փափազյանի ամուսինը), Ստեփան Ակայանի, Հովսեփ Փուշմանի, նկարչուհի Շահինի կամ Շահանդուխտ Մարգսյանի (նկարչության դասատու) եւ ուրիշների ավետսի մասին:

Թուղլաճյանի հրապարակ հանած ուսումնասիրություններից մեկն էլ «Թուրքական զինվորական նվագախմբի անցյալն ու ներկան» աշխատությունն է՝ թուրքերեն ու անգլերեն: Գրի երեք բաժիններում տվել է Օսմանյան վարչախմբի անցյալի ու ներկայի պատմությունը, ինչպես եւ թուրքական նվագախմբի գործիչների ստեղծագործության մասին: Թուրք եւ օտարազգի երաժիշտների թվում Թուղլաճյանը ներկայացրել է նաեւ իր ազգակիցներին, ովքեր կարեւոր ավանդ են ներդրել թուրքական նվագախմբի գործունեությանը: Նրանք են Տիգրան Ցուխաջյանը, Սինանյանը, Էդգար Մանասը, Համբարձում Լիմոնճյանը, Հարություն Հանեսյանը եւ ուրիշներ:

Թուղլաճյանի՝ հայկական թեմաներով գործերից են նաեւ «Պոլսի Իշխանաց կղզիները պատմության ընթացքում» (1989) եւ «Իսթանբուլի հայոց եկեղեցիները» (1991) գրքերը՝ հայերեն, թուրքերեն եւ անգլերեն: Այս բոլորի մեջ դրսեւորվել է հեղինակի ազգային ավանդների պահպանության, գնահատության եւ արժեքավորման առողջ դիրքորոշումը:

Թուղլաճյանն ունի եւ այլ թեմաներով աշխատություններ, որոնք վկայում են նրա լայն հետաքրքրությունների եւ աշխարհայացքի մասին:

Գիտական-ճանաչողական բնույթի ուսումնասիրություններից բացի, Բարսեղ Թուղլաճյանն ակտիվորեն մասնակցում է սամբուլահայ հասարակական-գրական-մշակութային կյանքին (Սանուց միությունները կազմակերպված միջոցառումներին՝ բանախոսություններով): Աշխատակցել է Սամբուլի հայ եւ թուրքական մուլին, հոդվածներով ու թարգմանություններով:

1970-1980-ական թթ. Թուղլաճյանն իր բանասիրական հետաքրքրությունների համար հանիցս այցելել է Երեւան: Կապված է եղել գիտությունների ակադեմիայի հետ: Տարբեր տարիների ուսումնասիրություններ է կատարել Ցարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում, օգտվել լուսանկարչական ֆոնդերի նյութերից, պարզել գրական-թատերական մի շարք գործիչների ով լինելը, զբաղվել Արտուլահյան եղբայրների լուսանկարչական աշխատանքով:

Շնորհավորելով մեր հին բարեկամի՝ Բարսեղ Թուղլաճյանի արժանավոր տարելիցը, մաղթում ենք նրան երկար տարիների առողջ եւ ստեղծագործական բովանդակալից կյանք:

Լուսանկարները տրամադրեց Պոլսից դոկտ. Բյուզանդ Ակիաշը:

■

Սպասող պատվախնդրությունը

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Գոհիկ խումն ամենուր է՝ առօրյա հարաբերություններում, եթերում, մամուլում, գրականության մեջ: Եվ Աստծո ամեն օր իմներս մեզ նույնիսկ անխոսովանելի պարտք ունենք՝ մեր ու մեր սիրելիների ունկը մաքուր պահել հեռատեսության հայհոյական խումից, վավաշոտ բառից, գոհիկ բանից: Փոկություն չկա: Ավելին՝ ստորինակ, անդիմադրելի մի մղում մեզ հակում է գոհիկության ու գոհիկաբանության: Օտար հեռուստասերիալները իբրեւ թե ճաշահում-մերժում, բայց փոխարենը հորինում ենք մեր՝ առավել անարվեստն ու նսեմականը, անմաքուր լեզվով եւ մասնածուն սյուժեով՝ գոհիկացած (մասնավորապես) 70-ն անց «հղիացած» պառավի խեմնելի դվագով: Հանային-պետական հեռուսարցկերության եթերում հանդիսավար-տոմմենը երիտասարդ աղջկա խումից անմեղ արտահայտություն է թոցնում՝ «բան սարեվ», եւ դրանից ամբողջ շարք սեռ ու անվայել ակնարկներ սարոմ՝ մերթ ընդ մերթ այլով անելով բեմախոհին մերկա, նաեւ իր խարդավանքին ակամա մասնակից հանդային հանդիսատեսին՝ նվաստացիս բանարկումով հարյուր անգամ գեղադասելի դարձնելով ուղղակի ու ազնիվ հայհոյանքը: Մամուլն իր հերթին է արձանագրում առօրեական գոհիկաբանություններ, ասենք, օրինակ, լրագրողի «թափանցիկ» ակնարկը «նախագահականի սիրուն տղերի» մասին:

Եվ այսպես՝ գոհիկաբանում ենք: Գուցե սրախոսո՞ւմ ենք: Բայց մենք վաղուց ջնջել ենք դրանք բաժանող սահմանները եւ վստահ լինելով, թե սրախոսում ենք, ընդամենը գոհիկաբանում ենք: Եվ գոհիկի խումն ամենուր է՝ առօրյա հարաբերություններում, եթերում, մամուլում, գրականության մեջ: Եվ գոհիկի խումը միայն գոհիկի բառը չէ, գոհիկի արտահայտությունը չէ: Գոհիկացել է մտածումը, դյուրին է դարձել ամենասնծեղ բառով էլ գոհիկաբանել:

Գոհիկաբանությունը թափանցել է երգարվեստ: Ինչի՞ ասես ունկնդիր չենք, մեղեդիապանծոյծ ինչ բառային աղտեղություն ասես չենք «վայելում»: Ընթրիկնում ենք «Առամուի կարմիր գլազարը» (որի գեղարվեստական տիտանիությունը հավաստում են մեր մի քանի հայտնի երգչուհիներ՝ երգի տեսահոլովակում իրենց եռաբխավորություն-ներկայությամբ, անշուշտ նաեւ հանդային հեռուսատեսությունը՝ երգի դարբերական հեռարձակումով): Երգի տուկարում հոգեւոր սնունդն առա՛ռեւ արժեզուրկ է, մինչդեռ գավառական «գլազարի կիլոն երկուս ու հիցուն» է: Երգիչ հայ տղան սկսել է «հավալի բառերով» սիրո «հավալի» խոսովանություն անել՝ անկաղ, անհեթեթ ու անդաստիվ: Մեկ ուրիշը մայրասեր է եւ բոլոր ոչ այդդիսիներին հորդորում է՝ «ու մոր դաստիվը դդի դահես»: (Նույնիսկ ա՛յս եւ այսպիսի՛ հորդորի կարիքն ունենք):

Դառնանք մերօրյա հայ սիրերգին, փորձենք հասկանալ ժամանակակից հայ երիտասարդի սիրո չափն ու ծերը:

Նոր սերունդը, ինչպես որ ակնկալվում էր, սիրո իր ըմբռնումը, իր բանաձեւն է բերում: Մեկն ահա՝

Հինգ ծանոթ զգայարաններ՝/ Լսել, տեսնել, զգալ, համ եւ հոտ.../ Վեցերորդը չեմ զգացել/ Բայց ասում են՝ սերն է:/

Գլոբալացվող նոր սերունդը սեռ ու սիրո արտահայտության մեջ գլոբալաբար ազատ է, առանց բարդույթների: Միավասիկ.

Թող ինձ սիրի՝ ով լինի/ Թող մեկ տարի, մեկ հով լինի...

Սիրուց խեմթացել են բոլոր ժամանակներում: Մեր ժամանակներն էլ բացառություն չեն, թեեւ փոքր-ինչ յուրօրինակ են.

Մի վախեցեք, խենթ չեմ ես/ Իմ հոգին է խենթացել/ Ուզում եմ ես վազել/ Վազել ու անվերջ երգել...

Խոստովանենք՝ գեղարվեստական ոգեկերն ինքնաթիռ է: Մնում է միայն ոգեկերացնել վազող ու հրնթացս «անվերջ երգող» սիրահարին, եւ գեղագիտական բավականությունը կդառնա կատարյալ: (Ի դեմ, վազող սիրահարի այս կերպարից միանգամայն ակնհայտ է, որ իրականանալի է մեկ ուրիշ երգի հերոսի աղերսը՝ «Անբարժ սիրս բարժիր գոնե»):

Մեկ ուրիշ երգում սիրուց խենթացածը հանգիստ քայլում է փողոցով, բայց դրա փոխարեն անհեթեթ խոսքեր է ասում. թե չէ՝ ի՞նչ խենթ.

Սեր իմ անվերջ/ Թող քո մեկ ժպիտով/ Քայլեմ ես փողոցով՝ եվ ասեմ՝ տե՛ս:

Երգի հերոսն անհայտ է՝ ում, իսկ ես ընթերցողին ասեմ, որ բնագրից վերոբերյալ մեջբերումն անելիս խիստ ուշադիր եմ եղել, եւ վերջակետն իր տեղում է:

Վերեւում ոչ պատահականորեն ակնարկվեց սիրո չափի մասին: Հայ երգի հերոսի համար սերը ենթակա է տարածա-ժամանակային չափումների, թող որ առայժմ ոչ այնքան ճշգրիտ.

Ուզում եմ քեզ սիրել/ Մոտավորապես 10 վայրկյան/ Մոտավորապես 10 մետր/ Մոտավորապես իմացա ես/ Մոտավորապես, բայց մոտավորապես/ Մոտավորապես այդ եմ ես...

Ընթերցողին նորից հավաստիացնեմ՝ այս դեպքում եւս խոսագույն ուշադրությամբ եմ վերաբերվել բնագրին, ոչ մի սխալ չկա, ճիշտ այնպես, ինչպես որ ոչ մի միտք չկա:

Այնուհետեւ.

Տղա

Լսիր, կանգնել եմ իրար դիմաց
Երկու պատժություն:
Աղջիկ
Լսիր, կանգնել եմ իրար դիմաց
Երկու հակերեցություն...

Սա հանելուկ չէ, ինչպես սխալմամբ կարող է կարծել ընթերցողը. իրար դիմաց կանգնած «երկու պատժությունն» ու «երկու հակերեցությունը» տղան ու աղջիկն են, որ դեմերի բարեհաջող զարգացմամբ իհարկե՝ ոլորի դառնան մեկ պատժություն ու մեկ հավերժություն: Հավերժությունների ու պատժությունների այս հետաբրքրական գումարումը խոսում է, անշուշտ, հայ երգի հերոսի մտավոր բարձր ընդունակությունների, ինչպես նաեւ հայ գեղի շարունակականությամբ մտահոգված լինելու մասին:

Հայ սիրային երգի մերօրյա որակի վերաբերյալ լավագույն պատկերացումը կարող է տալ վերջին շրջանում շատ տարածված մի երգ՝ Ռ. Ամյանի երգացանկից: Անվերնագիր այդ երգն այնքան արագ ու անվրեպ է մտել հայ երաժշտասեր հիրավի հասարակության սիրտը, որ անհնարաբեր պատվի է արժանացել՝ ինքնաբուխ վերնագրվել է («Սրտիկ»): Եվ քանի որ երգը խորացնում է ժամանակակից հայ երգին բնորոշ շատ հատկանիշներ, արժե փոքր-ինչ մանրամասնորեն անդրադառնալ դրան:

Երգի հերոսի մասին: Ավաղ, սա ո՛չ արժանավոր սիրահար է, ո՛չ կնամեծար ասպետ եւ իր «պատժության» սկզբում հասցնում է բամբասելու պես դժգոհել հերոսուհուց, որը սիրո smsներով նեղում եւ, իբր միչ է, եղերում է միամիտ տղային՝ չնայած վերջինիս պարդասանին.

Օ, աղջիկ, ինձ մի նեղի/ Ու անտեղի մի բեղի...

Անոյաբոյան տղան ի զորու չէ դիմագրավել աղջկա գերժամանակակից սիրագոհներին եւ տեղի է տալիս՝ միաժամանակ գիտակցելով, որ աղջկա մեղքով «պատժության» մեջ է ընկել, ուստի հարկավոր է գոնե այս կերպ՝ երգով վերացնել իր ակամա անկումը.

Մի՞ թե դու եւ որեղի՞ց/ Հայտնվեցիր իմ կյանքում/ Ու թողեցիր ինձ սիրո/ Մի նոր, մի նոր պատժություն:

(Փակագծում ասած՝ քանի որ դա «նոր» պատժություն է, ուրեմն տղան այնքան էլ միամիտ ու անմեղ չէ, որիշին ձեռանում է երգի սկզբում. սա էլ հերոսի բարոյական կերարագիրը): Այնուամենայնիվ, իրադարձությունների զարգացումը վանգի տակ է դնում նրա ազատությունը, նույնիսկ՝ կյանքը, եւ, ինչպես պատշաճ է դրամատիկ իրավիճակին, ինչում է տղայի հուզումնալից-հանգավոր մեներգը.

Ես ադրել եմ ուզում/ Ազատություն եմ ուզում/ Ինձ ամեն ինչն է հուզում/ Միայն մի բան ինձ չի զգում/ Որ ինձ մոտ ես վազում/ Բայց իմացիր, չեմ ուզում/ Որովհետեւ կան այս կյանքում/ Շատ հարցեր բացում-բացում:

Սեռերի հավասարությունն ապահովելու խնդրում հայերս ակնհայտաբար ջանացել ենք ավելի, քան հարկավոր էր, եւ այդ խնդիր ունենք արական տկար սեռը պատասխանելու հակառակ(որդ) սեռից: Ինչ վերաբերում է երգի գեղարվեստական արժանիքներին, անկասկած է, որ հայ պոեզիայում հայտնվել է ուրախալի այն տարատեսակը, որի բոլոր տողերը նույնահանգ են, ուրից յոթը գերազգիս հանգեր են, եւ մենք փաստորեն գործ ունենք տաղաչափական նոր երեւույթի հետ: Հանգաբանական առումով հատկապես շատ հետաքրքրական է մեր հարեւանների՝ մեր մեջ դեռ կենդանի լեզվից մի բառի կիրառությունը, ինչն ուրախալը դարձնում է ուշադրի ինտերնացիոնալ:

Եվ եթե ընթերցողի (ունկնդրի) համար այստեղ եւ ուրիշ բազմաթիվ-անթիվ երգերում ինչ-որ բան այնուամենայնիվ չի «դգում», հարցնենք՝ իսկ ո՞վ է հիմա դրան ուշադրություն դարձնում, ո՞ւմ հոգն է: Չէ՞ որ կարեւորը փառքն է ու փողը: Իսկ երգչի պատվախնդրությունը հագնվում կամ ավտոմեքենա չէ՝. կարող է եւ սպասել:

Այդ պատվախնդրությունը սպասման մեջ է մեր բազում երգիչ-երգչուհիներից նույնպես. Ռ. Ամյանը պատահական օրինակ է:

Այդ պատվախնդրությունը սպասման մեջ է հայ երգի մերօրյա բանա(ս)տեղծներից եւս. վերեւի օրինակները բոլորովին պատահական են:

Այդ պատվախնդրությունը սպասման մեջ է մեր շատ հեռուսաստիլիներից ու ռադիոկայաններից նաեւ. Յ1-ը պատահական օրինակ է:

▼▼▼

Հայոց լեզվում երգիչ բառի հոմանիշներին ավելացել է եւս մեկը՝ ասդ: Արդ խոնարհ մի խնդրանք ասդերին. Ասենու սիրուն, երկրագիներիս վրա բառային աղտեղություն մի՛ տեղացեք: Այնպես մեզի բանասեր ժողովուրդ ենք: Բանասե՛ր: Այդ սերը հավասված է հոգեւոր երգերով, էրոսով, հայրենիներով, որոնք ստեղծվել, կենցաղավարել են իբրեւ երգվող բան, ու թեեւ ամենակուլ ժամանակը հաճախ խլացրել, ժոռացության է մատնել մեղեդիները, բայց արժեւոր բանը պարել է դարեր: Ուրեմն մտահոգ ու պատվախնդի՛ր եղեք, թե բանական ինչ ժառանգություն եք թողնում սերունդներին, ձեր թողածն այնքա՞ն է արժեւոր, որ երբ անողոք ժամանակը նորից մոռանալ տա մեղեդիները, մենք մեր բանասեր լինելու՝ այսօր եւս ստեղծված ապացույցներն ունենանք: ■

Լուսանկարչության ռահվիրաներից

Լի Ֆրիդլանդեր: Ջոն Սարկովսկին Սիդնոնայում 1992 թվին

Վերջես խմբագրության հասած «Art in America» հանդեսը մեր ընթերցողների համար հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում անցյալ տարվա հուլիսի 7-ին վախճանված լուսանկարչության աստղաբեղում մեծ ավանդ ունեցող, Նյու Յորքի Մոմի արվեստի թանգարանի լուսանկարչության բաժնի երկարամյա տնօրեն Ջոն Սարկովսկու մասին: Հոդվածի հեղինակն է Էնդի Գրունբերգը

Ջոն Սարկովսկին մոտ 30 տարի ղեկավարեց այդ բաժինը եւ դարձավ լուսանկարչությունը որպես արվեստ դիտելու անխոնջ ջատագովներից մեկը: Նա 81 տարեկան էր, երբ ուղեղի կաթվածի բարդություններից մահացավ Իսթ Ստեփանում (Նյու Յորք):

Նա Մոմի արվեստի թանգարանի (ԱՍԹ) լուսանկարչության բաժնի տնօրենն էր արվեստի այդ տեսակի համար անցումային մի շրջանում՝ 1962-1991 թթ., երբ ավանդական եւ արվեստագետների մոտեցումները լուսանկարչության հանդեպ հեռզիեռ փոփոխության էին ենթարկվում:

Վաթսունական թվերին «Լայֆ» ազդեցիկ պարբերականը եւ այլ ամսագրեր սկսեցին բացահայտել լուսանկարչության էսթետիկական հնարավորությունները: Այդ ժամանակ արվեստագետ համարվելու ձգտում ունեցող լուսանկարիչները (Հարի Կալահանը, Աարոն Սիսկինը, Մայնոր Ուայթը) դեռ առանձին, մեկուսացված էին ավանդում: 90-ական թվերին, շնորհիվ լուսանկարչական ամսագրերի ջանքերին, նրանք արդեն որոշակի՝ միջին կարգավիճակով ներկայացված էին պատկերասրահներում եւ թանգարաններում:

Սարկովսկին (1925-2007 թթ.) մեծ դերակատարում ունեցավ այդ գործում: Նա հայտնաբերեց եւ առաջ մղեց այնպիսի լուսանկարիչների, ինչպիսիք են Դայան Արբուսը, Լի Ֆրիդլանդերը եւ Գարի Ուինոգրանդը, որոնք դարձան 1967-ի «Նոր վավերագրեր» ցուցահանդեսի գլխավոր «հերոսները»: Բայց անտարբեր մնաց հեռմոդեռնիզմի շարժմանը հետեւողների հանդեպ: ԱՍԹ-ն միայն իր թոռակի անցնելուց հետո՝ 1995-ին ուշացումով ձեռք բերեց Սինդի Շերմանի լոթանասունականների «անվերնագիր կադրեր» խորագրով լուսանկարների շարք:

Պետք է նշել, որ երբ Սարկովսկին ԱՍԹ մուտք գործեց, լուսանկարչության բաժինն արդեն հայտնի էր շնորհիվ իր առաջին տնօրեն Բոնոն Նյուհոլի գործադրած ջանքերի: Նրան պետք է համարել լուսանկարչությունը որպես արվեստ ճանաչելու գաղափարի հիմնադիրներից: Նա դեռ 30-ական թվականներին էր գրել հետեւողական հոդվածներ այդ մասին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նրան այդ պատասխանում փոխարինեց Էդուարդ Սթայչենը, որը մասնաբաժնային ցուցահանդեսներ կազմակերպեց (ինչպես «Մարդու ընտանիքը» խորագրով ցուցահանդեսը 1955-ին), որոնցում լուսանկարչությունը ներկայացված էր որպես մարդու փորձառությունը ուրիշներին փոխանցելու միջազգային լեզու: Նա նաեւ ժամանակակից աշխատանքների խմբակային ցուցահանդեսներ կազմակերպեց, որոնցում տեղ գտան աբստրակտ թեմաները եւս:

Սարկովսկին միչ թե շատ պահպանողական էր: Նրա կազմակերպած առաջին ցուցահանդեսը՝ 1963-ին կոչվում էր «5 իրաքյա անկախ լուսանկարիչներ»: Իսկ 1964-ի «Լուսանկարչի աչքը» ցուցահանդեսի համար իր պատրաստած կատալոգում արդեն խոսում էր այդ արտահայտչամիջոցի գեղարվեստական հնարավորությունների մասին: Նկարչության բնագավառում ֆորմալիստ գեղագետ-ճանապարհորդներին մոտիկ կանգնելով, Սարկովսկին գունավորային եւ լուրջ արվեստի լուսանկարները միեւնույն արտահայտչամիջոցի առաջընթաց զարգացման երկու բաղկացուցիչ մասերն էր համարում:

Նա գեղարվեստությունը տալիս էր ժամանակակից լուսանկարիչներին, ինչպիսին Ուիլյամ Էգլսոնն էր, որը «կարդի» վարպետ էր եւ 1976-ին հրատարակեց իր «Ուիլյամ Էգլսոնի ուղեցույցը» ալբոմը: Բայց չէր մոռանում նաեւ անցյալի վարպետներին: 1973-ին Սարկովսկին կազմակերպեց «Լուսանկարային մամուլի էջերից» ցուցահանդեսը, որտեղ հիմնականում ներկայացրեց Նյու Յորքի «Դեյլի Նյուս» թերթի արխիվային լուսանկարները: Իսկ նրա անուրանալի ձեռքբերումների թվին պետք է հիշատակել 1981-ից 1985-ը կազմակերպած Օքեն Սազբյի գործերի չորս ցուցահանդեսները: Սազբն Փարիզում ապրող դարասկզբի գովազդային լուսանկարիչ էր, բայց Սարկովսկին նրան ներկայացրեց որպես «լուսանկարչական ադարաշի բանաստեղծ»:

Բայց Սարկովսկու մեծագույն նպաստը իր թողած գրական ժառանգությունն է: Իր հայտնագործած վարպետների գործերի կարեւորության մասին իր փաստարկները, ինչպես նաեւ ճանաչված վարպետների (Անրի Կարտիե-Բրեսոն, Ուոքեր Էվանս) վերահմատավորումը հատասող գրությունները գեղարվեստական հիանալի գլուխգործոցներ են: Դրանցում՝ առաջ անցնելով Սյուզան Սոնտագից, Ջոնեթ Մալկոլմից եւ Ռոզալինդ Կրաուսից, որոնք 70-ականներին սկսեցին լրջորեն զբաղվել լուսանկարչությամբ, նա ցույց տվեց, որ լուսանկարները նույնպես արժանի են լուրջ վերաբերմունքի եւ ինքնելկսուալ ճնարկումների:

Այս առումով նրա ամենահիշարժան գործը 1973-ին հրատարակված «Նայելով լուսանկարներին» հատորն է, որտեղ Մոմի արվեստի թանգարանի հավաքածոյից 100 լուսանկարներ է ներկայացնում՝ յուրաքանչյուրի մասին մեկ էջանոց մեկնաբանությամբ: Կարճ, բայց խորաթափանց վերլուծական այս փոքրիկ էսսեները այսօր էլ ոգեշնչում են իրենց խոսքային ուժգնությունը:

Թանգարանից 1991-ին հեռանալով եւ թոռակի անցնելով՝ նա շարունակեց զբաղվել իր նախասիրած աղվեսով՝ լուսանկարչությամբ, կենտրոնացավ առավելապես իր տան շրջապատում գտնվող առարկաները «անմահացնելով»: Դրանք հիմնականում ցուցադրվեցին Նյու Յորքի Փեյս-Մակգիլ պատկերասրահում 2006 թվին:

Թարգմ.՝ Հ. ԴՈՆԼՍԵՆԸ

Գրքերի տեսություն

Ներկայացնում է ՀՐԱՉՅԱ ՄԱՐԻՊԵԿՅԱՆԸ

Համաշխարհային պոեզիայի մասնաշար

«Իրավունք» հրատարակչությունը 2007 թ. նախաձեռնեց համաշխարհային պոեզիայի դասակարգերի տպագրությունը առանձին, փոքրիկ հատորյակներով. մինչեւ օրս «Համաշխարհային պոեզիա» մատենաշարով լույս է տեսել տասներեք գիրք: Առաջին եւ տասներկուերորդ հատորները ներկայացնում են Ալեխանդր Պուշկինի բանաստեղծությունների ընտրանին՝ Հովի. Թումանյանի, Ե. Չարենցի, Պ. Սեւակի, Հ. Սահյանի, Վ. Դավթյանի, Հր. Հովհաննիսյանի, Գ. Եմինի, Ռ. Դավոյանի եւ այլոց թարգմանությամբ հայ ընթերցողին հայտնի եւ անհայտ բանաստեղծություններ: Ռուսական պոեզիան մատենաշարի երրդ գրքով Ֆումզիկ Կիրակոսյանի թարգմանությամբ «Ներկայացնում» է նաեւ Միխայիլ Լերմոնտովը: Նույն թարգմանչի իսդաններենից կատարած թարգմանությամբ լույս է տեսել նաեւ XX դարի ոչ միայն իսդանալեզու գրականության, այլեւ համաշխարհային պոեզիայի խոշորագույն բանաստեղծներից մեկի՝ Ֆեդերիկո Գարսիա Լորկայի հատընտիրը (գիրք երկրորդ): Անգլերենից երրորդ Ավագյանի թարգմանությամբ մատենաշարի իններորդ գրքով հրատարակվել է XIX դ. անգլիացի բանաստեղծ Շելլիի բանաստեղծությունների ընտրանին: Անգլիալեզու բանաստեղծության խոշորագույն դեմքերից մեկի՝ XVIII դ. շոտլանդացի բանաստեղծ Ռոբերտ Բյորնսի բանաստեղծություններն ու էպիգրամները լույս են տեսել Վահագն Դավթյանի, Ֆումզիկ Կիրակոսյանի եւ մատենաշարը կազմողի՝ Գագիկ Դավթյանի թարգմանությամբ՝ վեցերորդ հատորով: Տասներորդ հատորյակը XX դ. ազգությամբ ֆինն՝ սկանդինավյան պոեզիայի վրա մեծ ազդեցություն թողած բանաստեղծ Էյնար Դիկսոնիուսի «Երկրային ճմրություն» ժողովածուն է: Եվրոպական պոեզիայի գագաթներից մեկի՝ XIX գերմանացի բանաստեղծ Հայնրիխ Հայնեի հատընտիրը՝ Հովի. Թումանյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Գ. Սայանի, Ա. Սոսեանի եւ ուրիշների թարգմանությամբ առայժմ մատենաշարի վերջին՝ տասներեքերորդ հատորյակն է:

Արեւելյան պոեզիայի հարուստ գանձարանը ներկայացվում է մատենաշարի չորս գրքով: Հինգերորդ մեծ բանաստեղծ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռաբինդրանաթ Թագորի հատընտիրը (գիրք չորրորդ) կազմող բանաստեղծությունները հայերեն են թարգմանվում առաջին անգամ: Ուշագրավ է, որ արաբական պոեզիայի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Աբու Ալ-Ալա Ալ-Մաառի խոյակները, որ գեղեցիկ են մատենաշարի յոթերորդ գրքում, արեւմտահայերեն թարգմանությամբ են լույս տեսել (թարգմանիչ՝ Սիրակ Հակոբ Վարժաղեյան): Պարսիկ մեծ բանաստեղծ Օմար Խայամի ռուբայաթը Արտակ Աբայանի թարգմանություններով է կազմված: Պարսիկ մեկ այլ միջնադարյան բանաստեղծ Ռումին համեմատաբար ավելի հիչ է թարգմանվել հայերեն: Ռումիի (Մոլլայի) գագաթները եւ խոյակները մատենաշարի տասնմեկերորդ հատորում են ամփոփված: Տպագրության է պատրաստ նաեւ պարսից մեկ այլ խոշորագույն պոետի՝ Հաֆեզի հատընտիրը:

Համաշխարհային պոեզիայի սույն մատենաշարով լույս է տեսել նաեւ երեքեր Չարենցի «Տեսիլագաժեր»:

Մատենաշարի նախաձեռնող, հրատարակչության հիմնադիր Թաթուլ Բաղասյանի հավաստմամբ համաշխարհային պոեզիայի հարուստ գանձարանի այս ծաղկաքաղ-մատենաշարը հարյուր գիրք է լինելու:

Նենսի Գրիգորյան. «Ջաբել»

Եր., ՀԳՍ հրատ., «Լուսակն» հրատ. տ., 2007 թ., 184 էջ:

Նենսի Գրիգորյանը ամերիկահայ հայտնի բանաստեղծ, արձակագիր եւ գրականության դոկտորուհի է, բազմաթիվ բանաստեղծությունների, պատմվածքների, ակնարկների եւ երկու վեպի հեղինակ: Արժանացել է բազմաթիվ գրական մրցանակների՝ այդ թվում եւ Ամերիկյան պոետների ակադեմիայի մրցանակին(1987): Ապրում է Նյու-Յորքում: Ամերիկահայ արձակի լավագույն ներկայացուցիչներից է: «Ժամանակակից ամերիկահայ պատմվածք» ժողովածուի մեջ զետեղված է նաեւ նրա պատմվածքներից մեկը: Անդրանիկ Վերնոյի (Աստ Մալաբյան) «Մայրիկ» վեպի պես հուզիչ եւ սաստիկ «Ջաբել» վեպն Ամերիկայում լույս է տեսել 1998 թվականին եւ նոր է թարգմանվել Ամերիկայի հայկական դպրոցների պատասխանի գրականության ցանկում:

Եղեռնը վերադրած Ջաբելին, (որ իրական կերպար է, Նենսի Գրիգորյանի տատն է), որ ծերության թվում է, թե լսում է թուրքերի ձայները. «Գիշերները հայախոս ու թրախոս երկարվում սպիտներն ու անմարմին ձայները Ջաբելի մահճակալի շուրջբոլորն էին պտտվում»: Ջաբելն իր կյանքի վերջին օրերն ապրում է ամերիկյան ժամանակակից իրականությամբ եւ ներկային սպառնացող եղեռնի հիշողությամբ երկասված: Առաջին՝ «Դախտ եւ դժոխք» գլուխը, որ Ջաբելի մահվան պատմությունն է, վերջանում է հեղինակության ոճով («Սա է Ջաբելի պատմության ավարտն ու սկիզբը»): Այն ավարտուն պատմվածք է, որ կոմպոզիցիոն շրջանակի մեջ է առնում ամբողջ վեպը: Բացի առաջին գլխից առաջին դեմքով շարադրված այս վեպն ընթերցողին ստիպում է խորասույզ վերադարձել եղեռնը տեսած եւ որբացած հայ աղջկան կյանքի հուզիչ պատմությունը: Եղեռնը վեպում պատմական առ ժամանակ դուրս է գալիս իրադարձության մեջ բեկվող իրողություն: Հերոսուհին ժամանակցվում վերիմաստության ոլորտին (տեսլիզմ) սահմաններից. մերթ ընդ մերթ հայտնվելով անատոմի երազը) եւ բախվում գոյատեւական առեղծվածներին (մեռնություն, մարդու իմաստության օտարում եւ այլն): Վեպի վերջին գլուխը եւս սկսվում է հեղինակի նման. լինում է չի լինում...

Վեպն անգլերենից հայերեն է թարգմանել Արամ Արտենյանը: Գրի հրատարակությանն օժանդակել է նաեւ Նենսի Գրիգորյանը:

Համաշխարհային փորձը փորձանք չէ

Հեռահրությամբ կարդացի «Դասական գրականությունը համառոտ տպագրելու փորձ, թե՞ փորձանք» գրախոսությունը թերթի «Գրքերի տեսություն» էջին մեր հրատարակած սեղմավեպերի շարքի մասին:

Չեմ կարող համաձայնել գրախոսության մեջ տեղ գտած որոշ դիտումների հետ: Նախ վերնագրի մասին: Արդյոք վնասգավո՞ր է (գրախոսի լեզվով՝ փորձանք է) սեղմավեպերի հրատարակումը: Գրեթե չկա մի քաղաքակիրթ ժողովուրդ, որն այսօր չունի իր դասական երկերի համառոտ տարբերակների հրատարակման բազմամյա փորձը: Եվ, կարծես թե, ոչ մի ժողովրդի գրականությունը փորձանքի մեջ չի ընկել սեղմավեպ հրատարակելու պատճառով: Ավելին, բոլորին էլ այդ փորձն օգնել է սփոփելու իրենց գրականությունն աշխարհով մեկ: Հիշենք, որ օտար լեզուները մենք սովորել ենք նախ սեղմավեպեր կարդալով:

Գիրքը նախ եւ առաջ բովանդակություն է. մնացածը՝ նկարագրությունները, գեղեցիկ լեզուն, լեզվի ճոխությունը, ոճը եւ այլ գործիքները, այդ բովանդակությունն ամենալավ ձեւով ընթերցողին ներկայացնելու համար է: Սեղմավեպերը (բացի լեզու սովորելու զուտ ուսումնական նպատակ հետապնդելուց) կարճ ժամանակում ծանոթացնում են XXI դարի զբաղված մարդուն վեպերի հենց բովանդակությանը: Այն, որ համակարգված կերպով հայերեն սեղմավեպեր մինչ այս չեն հրատարակվել, հավանաբար հայերեն լեզուն սովորելու ցանկության պակասն է եղել օտարազգիների եւ հայերեն չիմացող սփյուռքահայերի կողմից: Հայերեն հրատարակելով սեղմավեպերը՝ հույս ունենք, որ դրանք կխթանեն այդ ցանկությունը: Միգուցե հետո էլ առաջանա ամբողջական վեպը կարդալու տենչը: Թերեւս, սա վերաբերում է նաեւ Հայաստանում ապրող շատ հայերի:

Հետեւյալ վիճելի պնդումը (խմբագրության անունից) այն է, որ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» սեղմավեպն արեւմտահայերենից արեւելահայերեն թարգմանելն ու հրատարակելը (մեջբերում եմ) «հակագրական հեքանոսություն» է: Կարծում եմ, վատ չէր լինի, որ թարգմանություններ արվեն (եւ ոչ միայն սեղմավեպի տեսքով) հայերենների միջեւ՝ հնարավորություն տալով մեր ժողովրդի երկու կեսին ըմբռնելու երկու հայերենով գրված գործերը: Ինչո՞ւ կարող ենք հաճույքով կարդալ թարգմանություններն այլ լեզուներից, բայց ոչ հայերենների միջեւ: Չէ՞ որ այդպիսի թարգմանությունն ավելի ճշգրիտ կլինի, քանի որ խոսխված է նույն ժողովրդի ազգային, մշակութային եւ պատմական հենքին: Ինձ հայտնի չէ իրեն մեկ ազգ համարող որեւէ ժողովուրդ, որն ունի երկու կենդանի գրական լեզու, որոնք միմյանցից տարբերվում են երեւի թե ավելի, քան, ասենք, որաբերենն ուկրաիներենից: Եվ հարց է ծագում՝ ինչո՞ւ որաբերենից կարելի է թարգմանել ուկրաիներեն եւ հակառակը, իսկ արեւելահայերենից արեւմտահայերեն (կամ հակառակը)՝ ոչ: Երկու հայերեն լեզվի առկայությունն իրողություն է, եւ պատահմամբ չէ այն, որ դրանք երբեւէ կդառնան մեկ լեզու: Ընդունենք դա եւ փորձենք օգտագործել այդ հարստությունը՝ թարգմանելով հայերենից հայերեն:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆ,
«Գիտանք» հրատարակչության տնօրեն

Անշուշտ, փորձանք չէ, բայց...

Վերեւում ներկայացված «Գիտանք» հրատարակչության տնօրեն Ալեխանդր Աղաբեկյանի նամակը «Ազգ Մշակույթ-Հավելվածի» նախորդ համարում տպագրված «Դասական գրականությունը համառոտ տպագրելու փորձ թե՞ փորձանք» նյութի առիթով է: Հրատարակչության նախաձեռնությամբ «սեղմավեպի ծրագիրը» գրական եւ ընթերցողական շրջանակներում, վստահաբար, առաջացնելու է հակադիր կարծիքներ: Նկատենք, որ հեղինակի (Հրաչյա Սարիբեկյանի) «Դասական գրականությունը համառոտ տպագրելու ժամանակը» նախնական վերնագրի փոփոխությունը (փորձ թե՞ փորձանք) կատարել է խմբագրությունը՝ արտահայտելով որոշակի վերաբերմունք: Անշուշտ՝ թե փորձը փորձանք չէ: Բայց մի քանի նկատառումներ՝ այս առիթով:

Օտարների համանման փորձը, ասենք անգլիացի հեղինակներինը, անգլերենը այլախոսներին ուսուցանելու զանգվածային միջոց է: Այս առումով դժվար թե հայերենը որեւէ պահանջարկ ունենա, եթե իրատես լինենք կոչին արձանագրելու, որ իր բնօրանում իսկ հայերենը նվազացած՝ եթե չասենք արհամարհված է: Բուհերի օտար լեզուների ֆակուլտետներն ամենաշահանջարկ ունեցողներն են, հայկական բանասիրության ֆակուլտետը՝ խեղճացած, էլ չասած անգլերենի մասնավոր դասընթացներին հաճախողների օր-օրի ավելացող քանակի մասին՝ վառավիրից մինչեւ ծրագրավորող: Այս միտումը ուղղված է առանց այն էլ Հայաստանի սահմաններում պարփակվող հայերենի գործառույթային սահմանափակումներին՝ ընդհուպ նրա զուտ հաղորդակցական-կենցաղային մակարդակը: Վաղուց արդեն ո՛չ պետական աստիճանների ամբիոններից (Աժ եւ այլն), ո՛չ հեռուսատեսիոններից, ո՛չ մամուլից չի երեւում հայոց լեզվի ազնվաբուխ փայլը, այլ միայն գեռնատառած, ծռմռված բառաբերտերի՝ հաճախ տխեղծ շարադրամ: Հայոց լեզվի բառամթերքի ազնվական շերտը բառարաններում նիրհելու է այնքան, որքան մեր ժողովրդի այդ շերտը կողոներն են անցեալված մնալու... Փաստորեն հայ դասական գրականությունը ինչ-որ ձեւով «հանդարտասխանեցվում» է հայերենի ներկայիս մակարդակին:

Դժվար է հանկարծակի գեղարվեստական գրականության այն պակերացման հետ, թե գիրքը միայն բովանդակություն է: Գեղարվեստական գրականությունը խոսքարվեստի մշակույթ է եւ դարձ սյուժե-ֆաբուլայից դուրս վերը՝ պակերամաճոնդության, ոճական արտահայտչաձեւերի լեզվական բարդ կառույց է: Զուտ բովանդակային շարադրանքի պակերացումներում կոչում են գրականագիտական, գեղագիտական շատ արժեքներ՝ նախեւառաջ հեղինակային ոճի առանձնահատկությունները, այսինքն՝ գրողի անհատականությունը: (Մտովի դիմելով մեր այսօրվա դասական ոճով ստեղծագործող գրողներից մեկին՝ պակերացրի նրա անտվոր զարմանքը, տարիներ անց իր ծավալուն արձակի սեղմագիր տարբերակի ենթադրյալ գոյության հանդեպ):

Հեռահրությամբ՝ վաղուց անդինից մեզ հետեւող կամ չհետեւող մեր դասականների հեղինակային իրավունքը այսկերպ արդյոք չի՞ ոտնահարվում, երբ մի պարզ հոդվածի կրճատման դեպքում հեղինակի դիմադրությանն ենք հանդիպում: Սեղմավեպը թերեւս օգնի հարթահարելու ընթերցողական նեղկա «ճգնաժամը», գոնե դպրոցներում եւ բուհերում ընթերցանության մեջ ներգրավողները գուցե այսկերպ ծանոթանան հայ գեղարվեստական արձակի պատմությանը՝ թեկուզ բովանդակության մասով: Որոշ դիտարկումներով 600-700 էջանոց օտարազգի հեղինակների վեպերի հայ ընթերցողն օրինակ, որեւէ կերպ հետաքրքրություն չի ցուցաբերում հայ գրականության հանդեպ:

Խնդրահարույց հաջորդ պարագան արեւմտահայերենի թարգմանության հարցն է: Ինչպես պակերացրել արեւելահայերենով, օրինակ, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Պ. Դուրյանի կամ Վ. Թեքեյանի բանաստեղծությունը, նաեւ Շահան Շահնուրի եւ մյուսների արձակը: Սփյուռքահայ արվեստագետի հետ հարցազրույցն, անգամ, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելիս, երբ նրանից դիմանկար ես փորձում ստեղծել, պարտադրում է լեզվական հարգաս միջավայրի պահպանում, որպիսեւ որեւէ անհատականություն նախեւառաջ՝ լեզվամտածողությամբ է առանձնանում: Անշուշտ, թարգմանական արվեստը առանձին նշանակություն է ունեցել ու ունի մարդկային հաղորդակցության պատմության մեջ, սակայն, կարծում ենք, գեղարվեստական գրականության՝ արեւմտահայերենից արեւելահայերեն եւ հակառակի թարգմանության պարագայում կոչչելու է լեզվական միջավայրը՝ իր ուրույն նկարագրով:

Ինչ վերաբերում է սեղմագիր գրականության պոդեսիոնալիզմին՝ սա առանձին խոսակցության նյութ է:

Ս. Բ.

Սարգսյան-Ալիեւ հանդիպումը լուսարձակի տակ

Թուրքական մամուլն ուշադիր հետեւում է դրա ընթացքին

Երեկ Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ Հայաստանի նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի առաջին հանդիպումն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Մեր թղթակից Արա Մարտիրոսյանը հենց հանդիպման վայրից լուսաբանել է դա: Այդ իսկ պատճառով անդրադառնալու ենք դրա թուրքական արձագանքներին:

Քաղաքական նախաձեռնությունների հանդեպ միջազգային ուժերի խանդոտ վերաբերմունքն ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը մեծապես սահմանափակել են Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը միջամտելու Թուրքիայի հնարավորությունը: Սակայն դա չէր կարող հանգեցնել հիմնահարցի նկատմամբ երկրում հետաքրքրությունների նվազեցմանը:

Թերեւս այդ առումով պատահական չէին հունիսի 5-ին «Զամանի», իսկ հունիսի 6-ին՝ թուրքական հանրային հեռուստատեսության եւ այլ լրատվամիջոցների հրապարակումները: «Հայացքներն ուղղվել են Ալիեւ-Սարգսյան հանդիպմանը» վերնագրով «Զամանը» գրել է. «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման համար, որի պատճառով ավելի քան 30 հազար ադրբեջանցիներ զրկվել էին կյանքից, իսկ միլիոնավոր մարդիկ լքել հարազատ օջախը, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կհանդիպեն Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Հայաստանը հայտարարեց, որ հանդիպումը հուսադրող է: Սակայն փորձագետները որեւէ առաջընթաց հանդիպումից չեն ակնկալում: Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը մամուլի ասուլիսում ասաց, որ հանդիպումը խաղաղության հաստատման լայն հնարավորություն է: Նա միջազգային կառույցներից պահանջեց չմիջամտել հիմնահարցին, ավելացնելով. «Լեռնային Ղարաբաղն ինքնին առեղծ համադարափակ հիմնախնդիր է: Միջազգային կառույցներն այստեղ պետք է զերծ մնան ավելի լայն միջամտությունից: Իր հողերի ադագա կարգավիճակը պետք է որոշի երջանի բնակչությունը»: Ադրբեջանի պատգամավորության նախագահ Սաֆար Աբիեւը Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի հետ հանդիպմանը նախազգուշացրել էր, որ իրադրությունը կարող է վերահսկողությունից դուրս գալ հայերի օկուպացրած տարածքներում: Իսկ Բրայզան նշել էր, որ ԵԱՀԿ Մինսկի կանցնի բանակցությունների մանրամասների քննարկմանը, եթե հունիսի 6-ի հանդիպմանն այդ հարցում համաձայնության գան երկու երկրների ադաջնորդները»:

Ի դեմ, հունիսի 4-ի մամուլի ասուլիսում ՀՀ արտգործնախարարը «Իր հողերի ադագա կարգավիճակը պետք է որոշի երջանի բնակչությունը» ասելու փորձարեն, ինչպես «Զամանն» է ներկայացրել, ասաց. «Դարաբաղի բնակչությունը պետք է ազատորեն արտահայտի իր կամքն իր ադագա կարգավիճակի վերաբերյալ»: Այդ առումով համեմատաբար ավելի ճշգրիտ էր թուրքական «Դարաբաղի բնակչությունը պետք է որոշի իր ադագա կարգավիճակի վերաբերյալ»: Այդ առումով համեմատաբար ավելի ճշգրիտ էր թուրքական հանրային հեռուստատեսությունը, որ նշեց. «Հայաստանի արտգործնախարար էդվարդ Նալբանդյանն ասաց, որ Ալիեւ-Սարգսյան հանդիպումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորմանը նպատակաուղղված գործընթացը շարունակելու համար բարենպաստ մթնոլորտ ստեղծելու»:

Ի տարբերություն «Զամանի», թուրքական հանրային հեռուստատեսությունն էլ ներկայացրեց Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի կարծիքը, թե հանդիպմանը Եվրոպան երկու երկրների նախագահներից ակնկալում է, որ նրանք Լեռնային Ղարաբաղի բանակցությունների շարունակման հարցում ընդհանուր հայտարարի գան:

Սարգսյան-Ալիեւ հանդիպման մասին ինչպես Բրայզայի, այնպես էլ Սեմնեբիի կարծիքների մասնակցումը «Զամանում» եւ թուրքական հանրային հեռուստատեսության կայքէջում կարեւոր է այն առումով, որ հանդիպումից վերոհիշյալ գործիչների ակնկալիքները համահունչ են ՀՀ արտգործնախարարի ակնկալիքներին: Այսինքն՝ դա ուշադիր թուրք ընթերցողի կամ հեռուստադիտողի համար ենթադրելի է դարձնում, որ հանդիպման ադադությունը ընթացքը ադրբեջանական կողմն է պայմանավորելու, իսկ հանդիպումից ԵԱՀԿ Մինսկի համանախագահ Բրայզայի եւ ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Սեմնեբիի հիասթափությունն դեռեւս պատասխանատվությունն ընկնելու է Իլհամի վրա:

Հ. ՅԱՔՈԲՅԱՆ

Ըստ ՄԱԿ-ի, մինչեւ 2015-ը սովյալների թիվը կիսով չափ կրճատվելու է

Հոռմում պարենի համաշխարհային ճգնաժամին նվիրված ՄԱԿ-ի գագաթաժողովն ավարտվել է: Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հայտարարեց, թե ընդունված համաձայնությունը «ցաս ջոր է պատմական»: Իսկ ԱՄՆ-ում եւ Բրազիլիայում կենսավառելիքի արտադրության նկատմամբ գագաթաժողովի մասնակիցների զուսպ վերաբերմունքը հարուցեցին Վենեսուելայի, Կուբայի եւ Արգենտինայի ներկայացուցիչների խիստ քննադատական ելույթները: «Ազգը» գրել էր հունիսի 5-ին Հոռմում Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի ունեցած ելույթի մասին, որն Արեւմուտքին մեղադրեց պարենային ճգնաժամ կազմակերպելու մեջ:

Համաժողովում հնչած մի շարք ելույթներում քննադատվեց նաեւ հարուստ երկրների վարքագիծը, որոնց սահմանած առեւտրական արգելքները խոչընդոտում են ուրիշ երկրներից պարենի ներմուծմանը:

Ամերիկյան 10 օդանավակայաններում կգործեն «մերկացնող» սարքեր

ԱՄՆ-ի 10 խոշորագույն օդանավակայաններում առաջիկա շաբաթներին կտեղադրվեն 38 «մերկացնող սարքեր», որոնք թույլ կտան տեսնել ուղեւորների մարմինների բոլոր ուրվագծերը: «USA Today» թերթը գրում է, որ օդանավակայաններն այդ քայլին դիմում են անվտանգության նկատառումներով:

Ազգային անվտանգության նախարար Մայքլ Չերտոֆը ուղեւորների զննության նոր համակարգին հավանություն էր տվել դեռ ադրիլի վերջերին: Նախարարը «մերկացնող» սարքերի աշխատանքը ցուցադրել էր Վաշինգտոնի եւ Բալթիմորի միջազգային օդանավակայաններում:

Մասնագետների գնդումների համաձայն, զննության ենթարկվող ուղեւորների դեմքերը մոնիտորի էկրանի վրա լղոզված են երեւում, իսկ նրանց մարմինների ուրվագծերը սխեմերի մեջ չեն պատկերվում:

«Մերկացնող» սարքեր կտեղադրվեն Լոս Անջելեսի, Բալթիմորի, Դենվերի, Ալբուկերկի, Նյու Յորքի, Դալլասի, Դետրոյթի, Լաս Վեգասի, Մայամիի եւ Վաշինգտոնի օդանավակայաններում:

Մենատը Բուշին մեղադրեց հետախուզական տվյալները կեղծելու մեջ

Կոնգրեսի վերին պալատը նախագահ Ջորջ Բուշին եւ նրա վարչակազմի բարձրաստիճան պատասխանատուներին մեղադրել է հատուկ ծառայությունների տվյալների կանխամտածված աղավաղման մեջ:

Սենատի հետախուզության հանձնաժողովի զեկուցագրում նշվում է, որ Բուշի վարչակազմի աշխատակիցները մեջբերել են բացահայտ ոչսալ տեղեկություններ, սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունները եւ «Ալ Ղաիդայի» գործողությունները շաղկապելով Սադդամ Հուսեյնի հետ եւ վերջինիս ամբաստանելով ահաբեկիչների զինելու, ԱՄՆ-ի դեմ միջուկային եւ կենսաբանական հարձակում նախապատրաստելու մեջ:

Մինչդեռ ԿՀՎ-ի զեկույցներից մեկում նման փաստերի մասին չէր խոսվել, ընդգծում է Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը:

Սենատի միջին հանձնաժողովի նախագահ Ջոն Ռոկֆելերի խոսքերով, Բուշի վարչակազմը խնամքով թաքցրել է այն փաստերը, որոնք կարող էին հանրության մեջ կասկածներ ծնել հակահրաչյա պատերազմի սանձազերծման նպատակահարմարության հարցում: «Մենք կարող էինք խոսափել աղեղից», շեշտել է սենատորը:

Ավելի վաղ Բուշի մամլո քարտուղար Դանա Պերինոն հայտարարել էր, թե Իրաքի պատերազմը սանձազերծվել է իբր հետախուզության սխալների պատճառով:

Արդեն երկրորդ անգամ Կոնգրեսը Բուշին մեղադրում է հետախուզական տվյալների միտումնավոր աղավաղման մեջ, առաջին անգամ նախագահին մեղադրանք էր ներկայացվել 2004 թվականին:

ՄՐՑԱՅԻՆ ՆԱՄԱԿԵՐԵՐ

Հայ երիտասարդությունն ընդդեմ Դարֆուրի ցեղասպանության

«Մենք պետք է բարձրաձայնենք ընդդեմ Դարֆուրում կատարվող դեպքերի: 1915-ին, երբ հայերի ձայնը լսելի չէր, օտարները, որոնք հայերի մասին չէին էլ լսել, օգնեցին մեզ: Մենք էլ մեր կարելին պետք է անենք դադարեցնելու ցեղասպանությունը Դարֆուրում», նշել է Հայ դատի Ամերիկայի արեւելյան շրջանների գործադիր տնօրեն Կարինե Բիրազյանը, «Հայ երիտասարդական դաշնության» անդամ հարյուրավոր երիտասարդների առաջ ելույթ ունենալով անցյալ շաբաթավերջին կազմակերպված սեմինարում:

Ըստ Ամերիկայի հայ ազգային կոմիտեի հաղորդագրության, Բիրազյանը խոսել է հասարակական, մարդական, կրթական եւ մշակութային ոլորտներում ջանքերը համախմբելու անհրաժեշտության մասին:

Բանախոսության ավարտին նա կոչ է արել ներկաներին իրենց ձեռքը թաթախել կարմիր ներկի մեջ եւ հետո դրոշմել մեծ սավանի վրա: Դրանով, նա բացատրել է, նախագահ Բուշին. «Մենք կհասկացնենք, որ հետեւում ենք Դարֆուրում կատարվող դեպքերին եւ միանում «Աֆրիկա էթն» շարժման ձեռնարկած քայլերին»: Քննարկվել են նաեւ այլ՝ հայաստանին օժանդակելու, ցեղասպանության ճանաչմանը նպաստելու հարցեր:

Ելույթ ունեցողների թվում են եղել Հայ դատի վարչության անդամ Ջորջ Աղաջանյանը, ծրագրերի տնօրեն Սերուժ Աբրահամյանը, Փենսիլվանիայի մասնաճյուղի նախագահ Արա Շալյանը եւ Վիսկոնսինի մասնաճյուղի նախագահ Զոհրաբ Խալիկյանը:

Հ. Օ.

Քլինթոն-Օբամա հանդիպում

Օրակարգում փոխնախագահի հարցն է

Նախընտրական երկարաձգ արշավի ընթացքում իր կնասակից եւ մրցակից Հիլարի Քլինթոնի նկատմամբ առավելության հասնելուց հետո Բարաք Օբաման տուն վերադառնալու փոխարեն Վաշինգտոն է մեկնել եւ խորհրդատվական հանդիպում է ունեցել Քլինթոնի հետ: Այդ մասին հաղորդում են BBC-ն, Ֆրանսիայում եւ ամերիկյան մի շարք լրատվամիջոցներ, վկայակոչելով Օբամայի մամլո քարտուղարի խոսքերը:

Գաղտնի հանդիպման մանրամասնությունները, բնականաբար, չեն հրապարակվում: Սակայն մեկնաբանները գրեթե վստահ են, որ Օբաման եւ Քլինթոնը քննարկել են փոխնախագահի թեկնածության հարցը:

Ի դեմ, կին կոնգրեսականներն Օբամայից բացահայտորեն պահանջում են փոխնախագահի պատասխանատու առաջարկել Հիլարի Քլինթոնին: Վերջինս դեռ երեքշաբթի օրը հայտարարել էր, որ չի հրաժարվի նման առաջարկությունից:

Օբաման գիտակցում է փոխնախագահի ձիրքն ընտրության կարեւորությունը: Պատահական չէ CNN-ին նրա արած հեռեալ հայտարարությունը. «Սա իմ ընդունելիք ամենակարեւոր վճիռն է նախագահ դառնալուց առաջ: Փոխնախագահը Սոիտակ տանը իմ մերձավորագույն խորհրդատուն է լինելու եւ վերջին ձայնի իրավունք է ունենալու: Ուստի ես սխալվելու իրավունք չունեմ»:

Հաղորդվում է, որ Օբաման երեք հոգուց բաղկացած հատուկ թիմ է ստեղծել, որը զբաղվում է փոխնախագահի ընտրության հարցով:

Հայտնի է միայն, որ Հ. Քլինթոնի անունն ընդգրկված է գլխավոր թեկնածուների ցանկում:

Քլինթոնի թեկնածությանն ընդդիմացողներ նշում են, որ լավ փոխնախագահի գլխավոր արժանիքը պետք է լինի համատեսությունը, որով Հ. Քլինթոնն այդի չի ընկնում: Ուրիշներն էլ ասում են, որ հանուն խաղաղական անհրաժեշտության կարելի է անտեսել սեփական զգացմունքները: Օրինակ, Ջոն Քենեդին այնքան էլ չէր սիրում Լինդոն Ջոնսոնին, բայց նրան դարձրեց փոխնախագահ:

Հ. Քլինթոնին ընտրելու դեպքում Օբաման կբահի միլիոնավոր ամերիկուհիների համակրանքը, ինչպես նաեւ կարող է օգտվել նրա խաղաղական փորձից:

Գուանտանամոյի բանտը կփակվի

Նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը մտադիր է փակել Կուբայական Գուանտանամո կղզու ռազմակայանի բանտը, որտեղ պահվում են ահաբեկչական գործունեության մեջ կասկածվող անձինք: Սոիտակ տան բարձրաստիճան ներկայացուցիչների վկայակոչելով՝ «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ վարչակազմը մտադիր է բանտի փակման մի քանի ծրագիր:

Դրանցից մեկը ենթադրում է Գուանտանամոյում պահվող կասկածյալների կարգավիճակի փոփոխում, ինչը թույլ կտա նրանց տեղափոխել ԱՄՆ տարածքում գտնվող բանտեր: Մեկ ուրիշ տարբերակի համաձայն, Գուանտանամոյում կալանավորների պահվելու իրավազորությունը պետք է որոշեն ոչ թե զինվորական տribունալները (ինչպես այժմ), այլ խաղաղարարական դատարանները:

Վարչակազմի դիրքորոշման այս փոփոխությունը բացատրվում առաջին հերթին միջազգային ընկերակցության հարաբերությամբ: Մյուս պատճառն այն է, որ Բուշի վարչակազմը փորձում է կասեցնել գերագույն դատարանին որոշ կալանավորների ներկայացրած հայցերը: Դրանց հետագա քննարկման դեպքում այդ կալանավորները կկարողանային առավել լրջորեն վիճարկել իրենց բանտարկությունը, նշում է Ֆրանսիայի:

«Նյու Յորք թայմս» աղբյուրներն իրենց հերթին հայտնում են, որ Գուանտանամոյում պահվող կալանավորների մեծ մասին առ այսօր որեւէ մեղադրանք չի ներկայացված: Դա իրավապաշտպան կազմակերպություններին հիմք է տալիս ԱՄՆ-ին հանդիմանել միջազգային իրավունքի խախտման մեջ:

Ռազմակայանը փակելու եւ կասկածյալներին ԱՄՆ տարածք տեղափոխելու համար իշխանությունները պետք է պարզեն կալանավորների կարգավիճակը եւ գտնեն նրանց կալանքի ու դատապարտման օրինական հիմքեր:

Գուանտանամոյի հատուկ բանտը 2002-ի սկզբներին բացվեց Աֆղանստանի պատերազմում ձերբակալված «Թալիբանի» եւ «Ալ Ղաիդայի» անդամների համար: Բանտի գոյության տարիներին այնտեղ մի քանի հարյուր կասկածյալ է պահվել, որոնց մի մասին վերադարձել են հայրենիք:

Ըստ «Նյու Յորք թայմսի», ներկայումս բանտի կալանավորների թիվը մոտ 450 է: Նախատեսվում է նրանցից 200-350-ին տեղափոխել ԱՄՆ տարածքում գտնվող բանտեր: Մնացյալներն իրենց պատիժները կկրեն հայրենի երկրներում:

Գիրք-հուշատար՝ իրական լեգենդների մասին

«Վերջին պահին ով տեսավ/ Ում էր կանչում օդաչուն/ Դեմը՝ այրված, սրտում՝ ցավ/ Ում էր կանչում օդաչուն:/ Չորս դին լեռ էր, բարձրաժայռ/ Անտառ էր խիտ, դարավոր/ Վայրէջք չեղավ, դառնացավ, /Ում էր կանչում օդաչուն: /Մաս էր չորս դին ու արյուն/ Նա էլ՝ արծիվ երկնում/ Մարմն իր վերից էր վառում, /Ում էր կանչում օդաչուն» ...

Ազատամարտում զոհված օդաչու Արամ Գրիգորյանի հայրն է այս տողերը, որ անմոյնման ուզում է նշել «Էրեբունի» օդանավակայանի անձնակազմի մասին՝ դա օդաչուների տունն էր եւ ընտանիքը:

Արցախի մայրերի միությունը զոհված օդաչուների ընտանիքի անդամներին գոհի բեկորներից ձուլած երախտագիտության մեդալներ շնորհեց, որից հետո խոսք առավ գրի հեղինակ Անահիտ Ցիրուխյանը: «Շնորհանդեսը կարող էիք անել կամ չանել, բայց ժողովրդին ասել, թե ովքեր են եղել օդաչուները, անիրդ հերինակը, որ գրել է 25-ամյա որդու զոհվելուց հետո: Դրանք կարդում ենք Անահիտ Ցիրուխյանի «Հերոսամարտի պողպատե թեւերը» 740 էջանոց գրքում, որ Արամի ու նրա բազմաթիվ օդաչու ընկերների կյանքի ու հերոսականության մասին է: Օրերս «Սուպկա» կինոթատրոնում այդ գրքի շնորհանդեսն էր, որի ժամանակ ազատամարտն անցած բազում օդաչուներ ու զոհված օդաչուների հարազատներ էին ներկա, ինչպես նաեւ բարոնուհի Քրոլայն Քոխը: Օդաչուներից մեկը գիրն այսպես գնահատեց. «Փառք Աստծու, որ այս գիրը կա, որ եկող սերունդը կարդա եւ գրքի իմանա, որ օդաչուները իրենց մահանների կամ կանանց փեշի տակ չեն մեռել, գործ են արել: Սա շատ մեծ աշխատանք է, մենք էլ առաջիկայում չենք գնահատում, բայց հետո, երբ մենք էլ չենք լինի, ժողովուրդը կգնահատի»: Երախտիքի խոսք ասաց նաեւ Հրայր Կիրակոսյանը որդին՝ Կրտսեր **Հրայր Կիրակոսյանը**, որ ծնվել էր հոր զոհվելու օրը:

«Ինչ որ արեց Անահիտը, չարեցին ոչ մեր հանրամանաչ գրողները, ոչ ոք: Ինձս, որ կարդված եմ «Էրեբունի» օդանավակայանի, թռիչքների հետ, այսպես մանրամասներ չէի կարող իմանալ, եթե այս գիրը չլիներ: Հայրենասիրության եւ ոգեշնչման գիրք է սա, որ դեռ է լինի յուրանչյուր ընտանիքում: Սրանից լավ նվեր չեմ պատկերացնում», ասաց տիկին **Էլլա Զունաբյանը**, հայտնի Հորդորի խոսքերը Արամ Խաչատրյանի ծննդյան օրն է: Երեկ վաղ առավոտից մարդկանց հոսքը չէր դադարում Կոմիտասի անվան պանթեոն, որտեղ հանձնված էր «կտակի», վերջին հանգրվան է գտել մեծ կոմպոզիտորը: Վարդեսաց վարդեսի՝ Արամ Խաչատրյանի ստեղծագործական ուղու մասին ջերմ ու երախտագիտության խոսքեր ասացին ու խոնարհվեցին կոմպոզիտորի հանձնարի առաջ՝ կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, երաժշտագետ Արեւսի Մարյանը, լոնդոնաբնակ մշավորական Սասատուր Գյոզալյանը: Վերջինս ընթերցեց իր ձոնը՝ նվիրված Արամ Խաչատրյանին, որի համար Արամ Իլյիչը սկսել էր երաժշտություն գրել, սակայն ցավոք... Արդեն 35 տարի է, ինչ մեզ հետ չէ մեր սիրված կոմպոզիտորը, սակայն նրա թողած հարուստ ժառանգությունը մշտապես դարձել է ուղեցույց երաժշտության բնագավառում:

Մայր աթոռի ավագ միաբան Ներսես արք. Պոզաթյանը անվանի կոմպոզիտորի հիշատակին կատարեց հոգեհանգստյան կարգ, աղոթեց, որ Արամ Խաչատրյանի հոգին արժանանա երկնային արքայության ու նոր սերունդներում նրա հոգին վերստին ծլարձակի՝ տալով նորանոր Խաչատրյաններ: Ծաղիկներով զարդարվեց կոմպոզիտորի շիրմարը ու խնկարկվեց նրա հիշատակը: Պանթեոնից մարդիկ հեռանում էին ոչ թե թախիծով, այլ հպարտությամբ, որ ունեցել են նման հանճարեղ կոմպոզիտոր, որին աշխարհն է ճանաչում ու կատարում նրա ստեղծագործությունները:

Թանգարանը երեք տասնամյակ նվիրված Գոհար Արշակովնան գոհ էին ցուցադրությունից: Հոբելյանական միջոցառումների շարքում կոմպոզիտորի տուն-թանգարանի 30-ամյակի առիթով հունիսի 6-14-ը կանցկացվի երաժշտական փառատոն, գիտական կոնֆերանս եւ համերգային կատարումներ:

Մրցույթ

Երեկ հայտնի դարձան Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների միջազգային մրցույթի հաղթողները՝ 37 հայտեր ներկայացվել են տարբեր երկրներից: Երրորդ փուլ դուրս եկած 10 ջութակահարներից (5-ը՝ արտերկրից, 5-ը՝ ՀՀ-ից) եզրափակիչ փուլ դուրս եկան 6-ը՝ խստապահանջ ժյուրին ընտրեց մրցանակակիրներին: Նախորդ որոշել էին առաջին մրցանակ չշնորհել, իսկ երկու 2-րդ մրցանակը տվեց Էմիլիո Մեսենեռին (Ֆրանսիա) եւ Մերի Խոջայանին (Հայաստան): Երրորդ մրցանակը կիսեցին Հիրոմի Իշիմուրոն (Ճապոնիա), Դիկսո Լին (Կորեա) եւ Աննա Հարությունյանը (Հայաստան): Խրախուսական մրցանակի արժանացավ Ալֆրեդո Ռեյես Լոպուսնովան (Մեխիկա): Ա. Խաչատրյանի ստեղծագործության լավագույն կատարման համար հատուկ մրցանակ էր սահմանել Ա. Խաչատրյանի անվ. տուն-թանգարանը: Դիկսո Լինին: Վիրտուոզ ստեղծագործության լավագույն կատարման համար Գինդ տղագրասան մրցանակը հանձնվեց Էմիլիո Մեսենեռին: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կողմից շնորհված «Լավագույն կոնցերտմայստեր» տիտղոսը Գոհար Գասպարյանին: Հանդիսատեսի համակրանքի մրցանակը տվեց Աննա Հարությունյանին: Մրցույթի ընթացքում եւ գալա համերգին հնչեցին տարբեր կոմպոզիտորների, տարբեր դարաշրջանների երաժշտական գործեր, որով էլ պատկերացում ստեղծվեց մրցույթի մասնակիցների պատրաստվածության ու մակարդակի մասին: Համերգում բոլորը կատարեցին Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները:

Արդեն հինգերորդ տարին է, ինչ ՀՀ մշակույթի նախարարությունը, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, «Արամ Խաչատրյան» մրցույթ մշակութային հիմնադրամը անց է կացնում մրցույթ եւ այս տարի այն կրկին ջութակահարների միջեւ անցկացվեց, իսկ եկող տարի կլինի թավջութակահարների միջեւ:

Երեկ ավարտված մրցույթը կայացավ ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո:

ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արամ Խաչատրյան՝ վարպետաց վարպետ

Երաժշտության տուն

«Հիանալի համերգ էր: Հրաշալի երեխաներ են, փոքրիկ արվեստագետներ: Սարաջյանի անվան դպրոցը միշտ էլ փայլել է տաղանդավոր երեխաներով եւ իզուր չէ, որ դասվում է լավագույնների շարքին: Գեղագիտական հաճույք էի ստանում լսելով նրանց կատարումը», այսպես գնահատեց կոմպոզիտոր **Արամ Սաթյանը** օրերս Սոնա Բաբաջանյան համերգասրահում Կոնսատանին Սարաջյանի դպրոցի տարեվերջյան հաշվետու համերգը: Այն մեկնարկեց Սարաջյանի «Վալսով»: Այնուհետեւ պատանիները կատարեցին Խաչատրյանի, Բաբաջանյանի, Վենյավսկու, Ռախմանինովի ստեղծագործությունները: Ութերորդ դասարանի աշակերտ Արթուր Հարությունյանն ու էլեն Սահակյանը նվագեցին իրենց հեղինակային ստեղծագործությունները: Դպրոցի մանկապատանեական երգչախումբն էլ ավելի ջերմացրեց դահլիճի ուրախ մթնոլորտը՝ հանդիսատեսին ծանոթ մանկական ստեղծագործությունները ներկայացնելով նոր ընկալմամբ ու գեղեցիկ բեմադրությամբ:

Կոնսատանին Սարաջյանի անվան երաժշտական դպրոցն ունի 55 տարվա հարուստ եւ բեղմնավոր կենսագրություն եւ համարվում է հանրապետության լավագույն կրթօջախներից, որում ընդգրկված են նաեւ գեղանկարչության, պարի եւ գեղագիտության զարգացման այլ կենտրոններ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հասկապես մանկապատանեական երգչախմբային աղվեսին: Վերջերս «Երգող Հայաստան» մանկապատանեական երգի մրցույթ-փառատոնում դպրոցի երգչախումբն արժանացավ առաջին մրցանակին: Տնօրեն **Արմինե Պողոսյանի** խոսքերով դպրոցում պահպանվում են լավագույն ավանդույթները, իսկ կարեւորագույնը երեխաների մեջ երաժշտության, գեղեցիկի հանդեպ սեր արթնացնելն է: Այդ նպատակով անցյալ տարի դպրոցը կազմակերպել էր մեկամսյա անվճար դասընթաց՝ փորձելով երեխաներին մոտեցնել աղվեսին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ներդաշնակ երկխոսություն մանկագրության եւ մանկական նկարչության միջեւ

Թերեւս, փաղուց ի վեր Թումանյան ասելով տեսնում ենք ավելին, քան իմաստն ու բարի մտքերը, բազմակողմանի զարգացած հեղինակ, ազգային գործիչ ու հնչեղ, ազդեցիկ գրիչ: Թումանյան, նեռանկում է «Գիքոր», «Մարո», «Անուշ», «Դեռի անհունը», «Թմբկաբերդի առումը», «Ծիսը», ինչպես նաեւ անմահ խորակների շարք, բարգմանություններ եւ հոդվարակախոսական գործեր, որոնք հարուցանում են մարդու նեռաբերեալը, բարձրացնում նրան մտավորականի մակարդակի: Թերեւս, այս նկատառումով է Թումանյանի ստեղծագործությունը դարձել «Սեւադա» արվեստանոցի գեղարվեստական դեկավարի նոպատակային հանձնարարությունը, ինչի որ, ըստ **Սամվել Սեւադայի**, «Չնայած շատ շնորհալի երեխաներ են մեծանում, բայց միշ են կարդում: Իմ հիմնական կոչվն է դա, որ հնարավորինս շատ ընթերցեն: Ցուցահանդեսի թեմաթիկան՝ «Թումանյանը եւ մեր»: Խորագիրը սահմանեց, որ Թումանյան կարդան: Պատրաստվում ենք հաջող ցուցահանդեսը Չարենցի թեմաներով կազմակերպել»:

«Այս ցուցահանդեսը գրականության եւ նկարչության յուրօրինակ երկխոսություն է, որի հիմնադիրները եւ կատարողները հիմնականում երեխաներն են: Իսկ խորագիրը ցույց է տալիս, որ մենք բոլոր ժամանակներում ոգեշի վերադառնանք մեր ակունքներին, մեր կենսափիլիսոփայությանը, մեր գրականությանը, մեր Թումանյանին», ասում է «Հայ-Արա» մշակութային միության տնօրեն եւ ցուցահանդեսի կազմակերպիչներից **Ռիտա Շառոյանը**:

Նկարագրերի գործունները բացահայտում են, որ ցուցահանդեսին մասնակցում են ոչ միայն երեխաներ, այլեւ երիտասարդներ, որոնց ձեռքի հմտությունն ու թեմաթիկ ընտրությունը տարբերվում է մանկական ոլորտությունից: 21-ամյա Դավիթը նկարել է «Հայոց վիշտը»՝ կիսաթեմ ու կոտրված խաչերով, կարմիր կակաչներով: Դավիթը մանկուց է նկարում, բայց 2 տարի է, ինչ կանոնավոր հաճախում է «Սեւադա» արվեստանոց: Իսկ 10-ամյա Ռոբերտ Պողոսյանը նկարել է «Անհաղթ ալյոռին» եւ պատմում է. «Մեզ հեքիաթների գիրք տվեցին: Ընտրեցի հեքիաթը եւ նկարեցի ալյոռին, ոսկու կառասն ու գտած ոսկին»:

Հունիսի 6-16-ը Հ. Թումանյանի տուն-թանգարանում գործող ցուցահանդեսը ուսադրավ էր նաեւ իր բազմաշերտ յուրօրինակությամբ: «Հայ-Արա» թատերական խմբի սաներից մեկը Գիտորի կերպարն ընդունած այցելուներին «Տսի համեցեք» էր կանչում դեռի ցուցասրահ, որ բացի նկարներից հանդիսատեսին էին սպասում նաեւ «Հայ-Արա» թատերական խմբի թումանյանական ենչով հագեցած մանրապատում-ներկայացումը:

Ս. Մ.

Գոհար Գասպարյան՝ հարազատ մարդկանց հոգեկանում

Հունիսի 6-ին Արամ Խաչատրյանի ծննդյան օրն է: Երեկ վաղ առավոտից մարդկանց հոսքը չէր դադարում Կոմիտասի անվան պանթեոն, որտեղ հանձնված էր «կտակի», վերջին հանգրվան է գտել մեծ կոմպոզիտորը: Վարդեսաց վարդեսի՝ Արամ Խաչատրյանի ստեղծագործական ուղու մասին ջերմ ու երախտագիտության խոսքեր ասացին ու խոնարհվեցին կոմպոզիտորի հանձարի առաջ՝ կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, երաժշտագետ Արեւսի Մարյանը, լոնդոնաբնակ մշավորական Սասատուր Գյոզալյանը: Վերջինս ընթերցեց իր ձոնը՝ նվիրված Արամ Խաչատրյանին, որի համար Արամ Իլյիչը սկսել էր երաժշտություն գրել, սակայն ցավոք... Արդեն 35 տարի է, ինչ մեզ հետ չէ մեր սիրված կոմպոզիտորը, սակայն նրա թողած հարուստ ժառանգությունը մշտապես դարձել է ուղեցույց երաժշտության բնագավառում:

Մայր աթոռի ավագ միաբան Ներսես արք. Պոզաթյանը անվանի կոմպոզիտորի հիշատակին կատարեց հոգեհանգստյան կարգ, աղոթեց, որ Արամ Խաչատրյանի հոգին արժանանա երկնային արքայության ու նոր սերունդներում նրա հոգին վերստին ծլարձակի՝ տալով նորանոր Խաչատրյաններ: Ծաղիկներով զարդարվեց կոմպոզիտորի շիրմարը ու խնկարկվեց նրա հիշատակը: Պանթեոնից մարդիկ հեռանում էին ոչ թե թախիծով, այլ հպարտությամբ, որ ունեցել են նման հանձարեղ կոմպոզիտոր, որին աշխարհն է ճանաչում ու կատարում նրա ստեղծագործությունները:

Ցուցադրություն

Կեսօրին կոմպոզիտորի անվան տուն-թանգարանում բացվեց նոր ցուցանմուշների ցուցադրությունը, որը հնարավոր է ՀՀ մշակույթի նախարարության կողմից հատկացված 10 միլիոն դրամով 10 տարիների վերանորոգման շնորհիվ: Թանգարանի տարածքի ձեւավորումը իրականացրել է ճարտարապետ-դիզայներ Հայկազ Քոչարը: Տարիներում ներկայացված են՝ Ա. Խաչատրյանը Հայաստանում, թիֆլիսյան, մոսկովյան շրջաններ հասարակական գործունեություն, սփյուռքի հետ համագործակցություն եւ առանձին տարիներում «Գայանե», «Սպարտակ» բալետների հետ կապված նոր ցուցանմուշներ: Նորույթ է նաեւ հատկապես «Սպարտակ» բալետի ոգեշնչման պահը՝ կոմպոզիտորը Կուլիզեյի մոտ կանգնած, որը շարժական պատ է ու ընդգրկում է նյութը ամբողջությամբ: Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանն ու թանգարանի տնօրեն Գոհար Արշակովնան գոհ էին ցուցադրությունից: Հոբելյանական միջոցառումների շարքում կոմպոզիտորի տուն-թանգարանի 30-ամյակի առիթով հունիսի 6-14-ը կանցկացվի երաժշտական փառատոն, գիտական կոնֆերանս եւ համերգային կատարումներ:

ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մեկնարկում է եվրոպական ֆուտբոլի ստուգատեսը

Ով կնվաճի Անրի Դելոնեի գավաթը

Այսօր Շվեյցարիայում եւ Ավստրիայում կոչվի ֆուտբոլի Եվրոպայի 13-րդ առաջնության մեկնարկը: Երեք շաբաթ շարունակ ֆուտբոլասերների ուշադրությունը բեւեռված կլինի եվրոպական ֆուտբոլի 16 ուժեղագույն հավաքականների մրցավեճին, որոնք կվիճարկեն մայրցամաքի չեմպիոնի տիտղոսը:

Եվրոպական երկրների հավաքականների միջեւ մրցաշար անցկացնելու գաղափարը հղացել էր Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի քարտուղար Անրի Դելոնեն: Սակայն միայն նրա մահից հետո, 30 տարի անց, ՈՒԵՖԱ-ի աջակցությամբ հաջողվեց այդ գաղափարը կյանքի կոչել: Այդ հարցը քննարկվեց 1957-ին կայացած ՈՒԵՖԱ-ի կոնգրեսում: Հետաքրքրական է, որ կոնգրեսի մասնակիցներից միայն 14-ը կողմ քվեարկեցին նախագծին: 7-ը դեմ քվեարկեցին, 5-ը մնացին ձեռնպահ: Մրցաշարի գլխավոր մրցանակը՝ գավաթը ստացավ Անրի Դելոնեի անունը: Առաջին երկու խաղարկությունները կոչվում էին Եվրոպայի գավաթ, իսկ 1968-ից մրցաշարը համարվում է Եվրոպայի առաջնություն:

Եվրոպայի անդրանիկ առաջնության եզրափակիչ փուլը կայացել է 1960-ին: Վճռորոշ խաղում չեմպիոնի տիտղոսն են վիճարկել ԽՍՀՄ-ի եւ Հարավսլավիայի հավաքականները: ԽՍՀՄ հավաքականը կիսաեզրափակիչում հաղթել էր չեխերին (3-0), իսկ հարավսլավացիները 5-4 հաշվով գերազանցություն էին մատնել ֆրանսիացիներին: Այդ հանդիպումը մինչ օրս Եվրոպայի առաջնություններում ամենագոլառաս խաղն է: Եզրափակիչ խաղում առաջինը հաջողության հասան հարավսլավացիները (Միլան Գալիչ), սակայն Սլավա Մեսրեւելիչ վերականգնեց հավասարակշռությունը, իսկ լրացուցիչ ժամանակում Վիկտոր Պոնեդելնիկը խփեց հաղթական գոլը: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ հավաքականը բավական հաջող է հանդես եկել Եվրոպայի առաջնություններում: Բացի չեմպիոնի տիտղոսից, խորհրդային ֆուտբոլիստները 3 անգամ (1964, 1972, 1988) դարձել են արծաթե մրցանակակիրներ:

2004-ի Եվրոպայի չեմպիոն Հունաստանի հավաքականը

Եվրոպայի 13-րդ առաջնության մասնակից 16 հավաքականները նախնական փուլում բաժանվել են չորս խմբերի, որոնց կազմն այսպիսին է.

«A» խումբ. Շվեյցարիա, Չեխիա, Պորտուգալիա, Թուրքիա:

«B» խումբ. Ավստրիա, Խորվաթիա, Գերմանիա, Լեհաստան:

«C» խումբ. Ռումինիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Իտալիա:

«D» խումբ. Իսպանիա, Հունաստան, Ռուսաստան, Շվեդիա:

Առաջնության մեկնարկը կոչվի Բազելի «Մանկս Յակոբ Պարկ» մարզադաշտում, Շվեյցարիայի եւ Չեխիայի հավաքականների մրցավեճով, որը կսկսվի Երեւանի ժամանակով 21-ին: Ի դեմ, Հանդիպումը հեռուստատեսությունը հիանալի ճեր է պատրաստել հայ ֆուտբոլասերներին՝ ուղիղ եթերով հեռարձակելով Եվրոպայի առաջնության բոլոր 31 հանդիպումները: Նախնական փուլում օրական կկայանա երկու խաղ: Առաջինը կսկսվի Երեւանի ժամանակով 21-ին, երկրորդը՝ 23.45-ին:

Ներկայացնում ենք Եվրոպայի 13-րդ առաջնության խաղացանկը:

	Հունիսի 7-ին	
	Շվեյցարիա-Չեխիա	21.00
	Պորտուգալիա-Թուրքիա	23.45
	Հունիսի 8-ին	
	Ավստրիա-Խորվաթիա	21.00
	Գերմանիա-Լեհաստան	23.45
	Հունիսի 9-ին	
	Ռումինիա-Ֆրանսիա	21.00
	Հոլանդիա-Իտալիա	23.45
	Հունիսի 10-ին	
	Իսպանիա-Ռուսաստան	21.00
	Հունաստան-Շվեդիա	23.45
	Հունիսի 11-ին	
	Չեխիա-Պորտուգալիա	21.00
	Շվեյցարիա-Թուրքիա	23.45
	Հունիսի 12-ին	
	Խորվաթիա-Գերմանիա	21.00
	Ավստրիա-Լեհաստան	23.45
	Հունիսի 13-ին	
	Իտալիա-Ռումինիա	21.00
	Հոլանդիա-Ֆրանսիա	23.45
	Հունիսի 14-ին	
	Շվեդիա-Իսպանիա	21.00
	Հունաստան-Ռուսաստան	23.45
	Հունիսի 15-ին	
	Թուրքիա-Չեխիա	23.45
	Շվեյցարիա-Պորտուգալիա	23.45
	Հունիսի 16-ին	
	Ավստրիա-Գերմանիա	23.45
	Լեհաստան-Խորվաթիա	23.45
	Հունիսի 17-ին	
	Ֆրանսիա-Իտալիա	23.45
	Հոլանդիա-Ռումինիա	23.45
	Հունիսի 18-ին	
	Հունաստան-Իսպանիա	23.45
	Ռուսաստան-Շվեդիա	23.45
	1/4 եզրափակիչ	
19.06	1. A1-B2	23.45
20.06	2. B1-A2	23.45
21.06	3. C1-D2	23.45
22.06	4. D1-C2	23.45
	Կիսաեզրափակիչ	
25.06	1-2	23.45
26.06	3-4	23.45
	Եզրափակիչ	
29.06		23.45

«Լացիոն» հեսաfrfrվում է Քարամյանով

Ռումինական Gazeta Sporturilor թերթի տեղեկացմամբ ՀՀ հավաքականի եւ Ռումինիայի «Պոլիտեխնիկա» թիմի կիսապաշտպան Արսավազդ Քարամյանով հետաքրքրվում է իտալական «Լացիո», որի հետ մեր ֆուտբոլիստը ժամանակին բանակցել է: Վերջնական որոշումը կկայացվի «Պոլիտեխնիկայի» նախագահ Մարիան Յանկուի հետ իտալական կողմի բանակցելուց հետո: Հիշեցնենք, որ հայ ֆուտբոլիստով հետաքրքրվում է նաեւ ռումինական «Սյյաու

«Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումը նախապատրաստական աշխատանքների փուլում է

Գյումրու Ֆրունզե 148 հասցեում սկսել է գործել Բնության համախարհային հիմնադրամի՝ Հիրակի մարզում ստեղծվելիք «Արփի լիճ» ազգային պարկի գրասենյակը: Մարզի հյուսիսում, Հիրակ-Ջավախք բարձրավանդակի հայաստանյան հատվածում ազգային պարկի ստեղծման նպատակն է պահպանել բնության այս տարածքի բացառիկ կենսաբազմազանությունը՝ միաժամանակ խթանելով այդ գոտու եւ այնտեղ գտնվող համայնքների կայուն զարգացումը ենթակառուցվածքների, ամառային ու ձմեռային տուրիզմի զարգացման, էներգիայի արտադրության եւ այլ փոփոխությունների հաշվառմամբ: Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ կնքված միջպետական համաձայնագրով, գերմանական կողմի ֆինանսավորմամբ իրականացվող այս ծրագիրը նաեւ Հայաստան-Վրաստան անդրսահմանային համագործակցության նպատակ ունի: Ծրագրի պատասխանատու ՀՀ բնապահպանության նախարարությունն է, իրականացնողն ու կազմակերպիչը՝ նման հարուստ փորձ ունեցող «Բնության համաթարհային հիմնադրամ» (ԲՀՀ) միջազգային հեղինակավոր կազմակերպությունը:

Ծրագրի կազմակերպիչները սկսված նախապատրաստական աշխատանքներում կարեւորում են նաեւ հանդիպումներն ու քննարկումները տեղի համայնքների, մարզի ու հաղաքի տարբեր շահագրգիռ կառույցների, կազմակերպությունների ներկայացուցիչների եւ մասնագետների հետ, ինչը, թերեւս, նրանցից ոմանց հետ նաեւ հետագա համագործակցության լավ սկիզբ կարող է դառնալ: Այդպիսի հույս էր ներշնչում Գյումրու գրասենյակում տեղի ունեցած պատասխանատու եւ մի շարք այլ ՀԿ-ների ներկայացուցիչների հետ կազմակերպված հանդիպումը, որը խիստ կարեւոր ճանաչողականից բացի նաեւ լուրջ գործնական ընթացք ունեցավ:

Հանդիպման սկզբում ներկայացնելով ծրագրի իրականացման կազմակերպական կառուցվածքը, Ազգային պարկի ծրագրի ղեկավար, գերմանացի միջազգային փորձագետ **Մագնուս Սիլվենը** նշեց, որ Հայաստանում այս աշխատանքները կազմակերպվում են ԲՀՀ-ի հայաստանյան մասնաճյուղի եւ Գյումրու գրասենյակի միջոցով: Ծրագրի, այդպես ասած, սիրտը, որտեղ հիմնական աշխատանքները կազմակերպվում են, Գյումրիում տեղակայված գրասենյակն է: Աշխատանքներում նաեւ ներգրավված է միջազգային թիմ՝ աշխատող դերակատարում ունեցող մի շարք ոչ մշակութային աշխատողներից, հիմնականում՝ փորձագետներ մասնակցային ալանավորման եւ համայնքային ներգրավման, կառավարման եւ աջակցության գոտու զարգացման ծրագրերի, էներգիայի միջավայրի, տուրիզմի եւ այլ: Բացի այդ, ՀՀ կառավարությունը բնապահպանության նախարարության հովանու ներքո ստեղծել է ծրագրի տարածքային խորհուրդ-կոմիտե, որտեղ ընդգրկված են ներկայացուցիչներ նաեւ այլ էկոնոմիկայի, գյուղատնտեսության, տարածքային կառավարման նախարարություններից, Հիրակի մարզից ու տեղի համայնքներից: «Մենք կուզենայինք,-ասաց պրն Սիլվենը,- այդտեղ ունենալ ներկայացուցիչներ նաեւ հասարակական կազմակերպություններից»: Այս ցանկությունը նա բացատրեց խորհրդում անկախ ձայն ունենալու իրենց շահագրգռությամբ, որը շատ կարեւոր են համարում:

«Հիմա մենք խիստ նախնական աշխատանքների կազմակերպման փուլում ենք,- անդրադառնալով գործերի ընթացքին՝ ասաց ծրագրի ղեկավարը,- իսկ սեպտեմբերից արդեն ավելի ֆորմալացվող մասնակցային ալանավորման փուլ ենք սկսելու»: Այս փուլում հիմնականում տվյալներ են հավաքվում, մասնավորապես՝ խնդրո առարկա տարածքի կենսաբանական տվյալների, սոցիալ-տնտեսական ոլորտներին առնչվող տեղեկությունների, կատարվում են հողօգտագործման տարբեր տարածքների քարտեզագրում, էներգետիկ իրավիճակի, տուրիզմի զարգացման հնարավոր ներուժի, նաեւ՝ տեղում այս նախաձեռնության հետ կապված մոտեցումների, ընկալումների ու սպասելիքների նախնական գնահատումներ: Նման ծրագրերը, մասնավորապես եվրոպական երկրներում ազգային պարկերի ստեղծման իր անձնական փորձից ելնելով նշեց պրն Սիլվենը, փոփոխությունների տանող կատալիզատորի դեր են կատարում: Երբ աշխատում, ասվում ես տեղի համայնքների, գյուղերի մարդկանց, այլ շահագրգռված կողմերի հետ, տեսնում ես, որ այստեղ ապագա տնտեսական զարգացման մեծ ներուժ կա: Այս նպատակով իրենք պատրաստ են եւ կփորձեն աշխատանքների ընթացքում ներգրավել նաեւ տեղական եւ արտասահմանյան այլ դոնորների:

Հանդիպմանը հնչեցին մի շարք բնապահպանական ծրագրեր իրականացնող Բնության համաթարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից սա Հիրակում առաջին ծրագիրն է: Մասնաճյուղի տնօրեն **Կարեն Մանվելյանը**, կարճ բնութագրելով առկա ազգային պարկի տարածքում ստեղծվելիք արգելոցային, ռեկրեացիոն (հանգիստ, տուրիզմ), տնտեսական, աջակցության գոտիները, իր հերթին նշեց, որ այս ծրագիրը երկու հիմնական նպատակ ունի: Առաջինը բնությունը պահպանելն է, եւ այստեղ Հայաստանի այլ տարածքների հետ համեմատած՝ ընդհանուր առմամբ բավական լավ վիճակ է, որոշ խնդիրներ կան՝ կապված մասնավորապես որսագողության հետ: Երկրորդ նպատակն է աջակցել գյուղական համայնքներին: Այս առումով եւս ծրագրից ուղղակի ակնկալիքները, սպասելիքները շատ են, եւ տնօրենի հավաստմամբ՝ իրենք կաշխատեն ազգային պարկի սահմանները վերջնական որոշելուց հետո գումարների մի զգալի մասն ուղղել այդ աջակցության գոտու, գյուղերի զարգացմանը: Երեք տարվա ետդիտությամբ ծրագրի ընդհանուր բյուջեն, եթե հաշենք խորհրդատվական-կազմակերպական ծախսերի համար նախատեսված 500 հազարը, 1 մլն 700 հազար եվրո է: Գրասենյակը նաեւ ձգտում ու աշխատում է, որ ծրագիրը շարունակություն ունենա՝ շահագրգռելով ու նոր ներդնողներ բերելով այս տարածաշրջան: Կարեն Մանվելյանը հավաստիացրեց, որ իրենք թափանցիկ են աշխատելու եւ իրենց խոսքերը համաձայնեցնելու են ինչպես տեղի համայնքների, այնպես էլ տարածքային ու հասարակական շահագրգիռ կառույցների հետ:

Հանդիպմանը մասնակցած հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հանդես եկան մի շարք լուրջ մշակված առաջարկություններով: Դրանց կփորձենք անդրադառնալ առաջիկայում:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ
Գյումրի

Քարի տարեդարձ

Այսօր ծննդյան տարեդարձն է Իսրայելիայում Հայաստանի պատվո հյուպատոս պրն **Լուիս Բարբերա Սարգսյանի**: Այդ առթիվ մեր խորանացի բարեկամին մաղթում ենք առողջություն, երկար տարիների կյանք եւ աշխատանքային արգասաբեր գործունեություն:

Շնորհավոր եւ քարի տարեդարձ:

«ԱԶԳ»

www.azg.am

Մրցույթի հրավեր 011-1/08

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Տավուշի մարզի Լուսաձոր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման-վերականգնման համար:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել կազմակերպության վերջին 3 տարիների ընթացքում կատարած աշխատանքների ցանկը:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում: Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը (ներառյալ բանկային երաշխիքը)՝ հունիսի 30, ժամը 17:00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐԹՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/31» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ կառավարության կարիքների համար՝ պատճենահանման մեքենայի պահեստամասերի ձեռքբերման գնման պայմանագիր կնքելու նպատակով**: Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 600 ՀՀ դրամ փոխանցել «Արդբինվեստբանկ», «Բեթ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ.Այունցին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16.30:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալության կողմից ՀՀ քաղաքացիական օդանավերի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է Ի. Հովսեփյան Գորտասանական 1 հասցեում գործող «Գաղտնագրագրող» ՓԲԸ «Հրազդան 5-ի տիեզերական ինստիտուտ» հիմնադիր՝ տիեզերական նպատակով Մարտիկ գնից եւ Արարատի շրջակայքից մանրաչափային քաղաքացիական օդանավերից 21.0 կՀց քաղաքացիական թույլտվության նպատակով:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի քննարկման ստացման վերջին ամսաթիվ 2008 թ. հունիսի 12-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալության կողմից ՀՀ քաղաքացիական օդանավերի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ, ծանուցվում է ՀՀ Սարատի մարզի Խորոնցաղի գրաստատեսարանում իմպուլս-սեսնալական նպատակով, 10.0 կՀց եւ որոշման նպատակով՝ 30.0 կՀց սարքերքա քաղաքացիական օդանավերից 40.0 կՀց քաղաքացիական թույլտվության նպատակով:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի քննարկման ստացման վերջին ամսաթիվ 2008 թ. հունիսի 12-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքացիական օդանավերի կառավարման գործակալություն

26 հունիսի – 27
Marriott ARMENIA YEREVAN
ԱՐՄԵՆԻԱ ՄԱՐՈՒՈՒ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՍԱՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂՆԵՐ
UTE Ինֆորմացիոն տեխնոլոգիաների տեղեկատվությունների միություն
Հայաստանի բանկերի միություն
Հայաստանի գործարարների (գործունեության ղեկավարների) հանրապետական միություն
Բիզնեսի եւ տեխնոլոգիաների երկխոսություն
ՀՀ Վարչապետի բարձր հովանու ներքո | հանձնարարությամբ՝ Սարգսյան եւ Microsoft
digitecbusiness FORUM 08
Տեղեկատվական տեխնոլոգիաները առօրյա բիզնեսում
Հեռ.՝ (010) 548881, Բջ.՝ (091) 248881, Էլ-փոստ՝ info@digitec.am, URL: www.digitec.am
ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ
ереван | Деловой Экспресс
ԳԼԽԱՎՈՐ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՎԱՆԱՎՈՐ MEDIA STYLE

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Հրատարակման պատասխանատու, գլխ. խմբ. Նարոյ Անանիեան: Տպաքանակ՝ 3000, սերտագրված է տպագրության՝ 6.06.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արտակունեաց 2: